

«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

«Համացանցային հաղորդակցական լեզվի  
առանձնահատկությունները և ազդեցությունը  
դեռահասների խոսքի մշակույթի վրա»

ԱՌԱՐԿԱ

Հայոց լեզու

ՀԵՂԻՆԱԿ

Անահիտ Զոհրաբյան

ՄԱՐԶ

Երևան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

ԵՊԲՀ «Հերացի» ավագ դպրոց

## Մուտքի խոսք

«Համացանցային ժարգոնի ազդեցությունը դեռահասների խոսքի մշակույթի վրա» հետազոտական աշխատանքում հեղինակը ուսումնասիրել է աշակերտների կողմից հաճախ օգտագործվող ժարգոնային արտահայտություններն ու հապավումները, կազմել է ինտերնետային ժարգոնային բառարան: Ուսումնասիրությունը նվիրված է հայերեն համացանցային առօրյա հաղորդակցման, մասնավորապես սոցցանցերի լեզվի առանձնահատկություններին: Համացանցում այսօր ստեղծվում է նոր լեզու, որը, հասկանալի նմանություններով հանդերձ, բավականին տարբերվում է մինչհամացանցային թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքից: Այս ուսումնասիրության մեջ փորձ է արվում քննելու այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են հենց հայալեզու համացանցին՝ գրության առանձնահատկություններ, բառապաշարային իրողություններ, համացանցային ֆոլկլոր: Անդրադարձ կա նաև այլատար հայերենի խնդրին: Հետազոտության հեղինակը անդրադարձել է նաև ժարգոնային լեզվի առաջացման պատճառներին, ուսումնասիրել դպրոցականների շրջանում տարածված սոցիալական ցանցերը, տարբեր ինտերնետային կայքեր, որոնցով դեռահասները շփվում են, ինչպես նաև հարցում է անցկացրել միջնակարգ դպրոցում: Հավաքած տեղեկատվությունը հնարավորություն է տվել պարզաբանելու երիտասարդական ժարգոնի առաջացման պատճառները և նշանակությունը:

## Ներածություն

Այսօր համացանցը տեղեկատվության հիմնական աղբյուրն է ժամանակակից դեռահասների և երիտասարդների համար: Օգտատերերի միջև հաղորդակցության արագությունն ու հասանելիությունը նպաստեցին, որ համացանցն օգտագործվի ոչ միայն որպես գիտելիքի աղբյուր, այլև որպես հաղորդակցման և զվարճանքի միջոց: Ակնհայտ է, որ ժամանակակից աշխարհում ինտերնետը գրեթե ամբողջությամբ փոխարինել է փոստին, հեռախոսին և կապի այլ միջոցներին: Իսկ վիրտուալ հաղորդակցությունը իր հերթին նպաստել է վիրտուալ հաղորդակցության հատուկ լեզվի առաջացմանը:

Սոցիալական բազմաթիվ ցանցեր, բաց ֆորումներ և անձնական էջեր դարձել են երիտասարդների շփման հիմնական ուղիները: Ամեն ոք, ով գոնե մեկ անգամ «այցելել է» համացանց, չի կարող չնկատել, որ «ցանցային» լեզուն ամեննին նման չէ գրականին: Շատ հաճախ այնտեղ սպրդում են անհասկանալի բառեր, տարբեր զգացմունքներ արտահայտող նշաններ, նկար-պատկերներ, աղավաղվում են ուղղագրությունն ու կետադրությունը: Չնայած դրան՝ այն կամաց-կամաց իր հաստատուն տեղն է գտնում մեզանում և տարածված է աշխարհի բազմահազարավոր երիտասարդների շրջանում: Այսպես, վերջին տարիներին մշակվել է հատուկ լեզու՝ ժարգոնը՝ այսպես կոչված՝ ինտերնետ կապի լեզուն, որով օգտատերերը շփվում են միմյանց հետ: Եվ ամեն օր այն ավելի ու ավելի ակտիվորեն է ներթափանցում մեր առօրյա կյանք:

Արդիականությունը. Ուսումնասիրության առարկան սոցիալական ցանցերում վիրտուալ հաղորդակցության ընթացքում դեռահասների կողմից լեզվական գրագիտության խաթարման պատճառների վերհանումն ու դրա կանխարգելումն է: Օրըստօրե ուղղագրական սխալները, առանց կետադրական նշանների, առանց մեծատառերի, կամայական կրճատումներով գրված տեքստերը դառնում են սովորական՝ առաջ բերելով գրագիտության անկում:

Նախագծի նպատակը. Բացահայտել ինտերնետի վիրտուալ հարթակներում տարածված ժարգոնի ազդեցությունը դեռահասների խոսքի մշակույթի վրա:

### Խնդիրները

1. Այցելել ինտերնետային տարբեր կայքեր, որտեղ դեռահասները շփվում են:
2. Դեռահասների շրջանում հարցում անցկացնել:
3. Ուսումնասիրել և վերլուծել սովորողների կողմից հաճախ օգտագործվող ժարգոնային արտահայտություններն ու հապավումները:
4. Կազմել համացանցային ժարգոնի բացատրական բառարան:
5. Պարզել ժարգոնային լեզվի առաջացման պատճառները:

Հետազոտության վարկածը. Ենթադրում եմ, որ երիտասարդական միջավայրում լիարժեք շփումն անհնար է առանց նրա լեզուն իմանալու: Մյուս կողմից՝ վիրտուալ հարթակներում տարածված ժարգոնը ազդում է դեռահասների խոսքի մշակույթի վրա և լուրջ ու հետևողական աշխատանք է անհրաժեշտ դեռահասներին մղելու, որ «հղկեն» իրենց լեզուն:

Մի քանի խոսք ժարգոնի մասին

Ժարգոնը սոցիալական որևէ խմբի ինքնահնար մի լեզու է՝ հասկանալի յուրայիններին, կազմված դիպվածաբանական բնույթի բառերից և արտահայտություններից:

Լինելով լոկալ, տեղայնային լեզու, երբեմն ժարգոնային բառերն ու արտահայտությունները թափանցում են ընդհանուր խոսակցական լեզվի մեջ, գործածվում գեղարվեստական շարադրանքում, հատկապես սոցիալական որևէ խմբի ներկայացուցիչների դիմանկարը ստեղծելու համար:

Ժարգոնի բառերը ծնվում են, այսպես ասած ապօրինի ծնողներից, փողոցում, ո՛չ հայր ունեն, ո՛չ մայր: Այսպիսի բառերը նաև արգո են կոչվում, այսինքն՝ շատերին անմատչելի:

Ժարգոնը երբեմն գործածվում է գաղտնախոսության համար, երկուսն իրար հետ խոսում են մայրենի լեզվին մոտ ինչ-որ լեզվով, իսկ կողքին կանգնած «հարիֆը» ոչինչ չի հասկանում: Ես դիտմամբ դիմեցի այդ օտար բառին, որը նույնպես ժարգոնային է և մեզանից շատերն են գործածում առօրյայում, սակայն ես խորհուրդ չէի տա, այդ բառը ցածր մակարդակի մարդուն բնորոշ բառ է:

Ժարգոնով խոսում են ոչ միայն սոցիալական խմբավորումներում, այլև դպրոցներում, որը կոչվում է դպրոցական ժարգոն, կա նաև ուսանողական ժարգոն:

Մի ասացվածք կա. *«Շորով ընդունում են, շնորքով ճանապարհում»*: Շնորք ասելով, հասկանում ենք վարվելակերպը, պահելու ձևը, կոնկրետացնելով ըստ մեր նյութի, կարող ենք ասել նաև՝ խոսելու ձևը, ինչ ասելու, ինչ բառեր գործածելու, ինչպես պատասխանելու մեջ է նաև շնորհը:

Մարդ կարող է շատ նորաձև ու շքեղ հագուստ կրել, բայց ասելու-խոսելու, պահվածքի շնորհ չունենալ: Այդպիսի մարդը բավական է բերանը բացի, որ իսկույն ճանաչելի լինի նրա բուն էությունը: Այս իմաստով ասում են նաև «արտաքինը խաբուսիկ է»:

Այս ամենը մեկ խոսքով կարելի է անվանել՝ դաստիարակություն: Մարդն իր դաստիարակությունը ստանում է ընտանիքում, դպրոցում, համալսարանում, ընկերական շրջապատում և այլն: Շատերը չգիտեն, թե ինչպես կարող են իրենք իրենց սիրելի ու դուրեկան դարձնել, կամ հակառակը՝ ատելի ու անտանելի՝ ըստ իրենց ստացած դաստիարակության, ըստ խոսելու ձևի, գործածած բառերի և այլն:

Երբեմն աննշան արտաքին ունեցող մեկը հենց սկսում է խոսել, աստիճանաբար ասես սկսում է փոխվել աչքիդ, գեղեցկանում է, տեսքը դառնում է համակրելի, վերանում է առաջին տպավորությունը, մարդուն սկսում ես հարգել, նրա հետ առնչվելը դառնում է հաճելի: Այս հանգամանքներում ծանոթությունը հետագայում կարող է վերածվել ընկերության ու բարեկամության:

Լինում է նաև հակառակը, արտաքինապես գրավիչ մեկը, անծանոթ մի մարդ, երբ սկսում է խոսել ու գործածել անհաճո բառեր ու արտահայտություններ, առաջին տպավորությունը փոխվում է՝ ի վնաս իրեն, և տրամադրություն չի մնում երկար նրա հետ լինելու ու լսելու:

Ի՛նչ զարմանք բան է խոսքը, որքան մեծ է լեզվի դերը մարդու կյանքում: Զուր չէ, որ ասում են. «Ոճը մարդն ինքն է »:

Ասում են նաև, թե մարդու բնավորությունը կարելի է կռահել նրա դեմքից, աչքերի արտահայտությունից: Իհարկե, ոչ միշտ, բայց հիրավի մարդու դեմքին շատ բան է ինքնաբերաբար փոխվում ու ամրանում՝ կապված նրա ներաշխարհի հետ:

Անհամ ու անդեմ խոսքը, որքան էլ քերականորեն ճիշտ լինի, վանող է: Այդպես է լինում, երբ մարդ խոսում է ոչ թե իր սեփական լեզվով, նա սեփական լեզու չունի էլ, այլ գործածում է լեզվական շտամպներ, որոնք էլ խոսքը դարձնում են ասես արդեն բազմիցս լսած, ծեծված, անհամ:

Լեզվական շտամպի մի քանի օրինակներ. «Անհապաղ ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ», «Այսօրվա դրությամբ տվյալները հետևյալն են», «Առկա պայմաններում հնարավոր չէ իրագործել ձեր առաջարկությունը», «Ձեր ասածը դուրս է իրական դաշտից»: Եվ այլն: Այդպիսի լեզուն անվանվում է գրասենյակային, այսինքն չոր ու ցամաք, անարտահայտիչ, խոսողի անհատականությունը չարտահայտող ու նրա լեզվական ինքնատիպության դրոշմը չկրող:

Այսպես մենք կրկին հանգեցինք լեզվի ու բնավորության սերտ առնչությանը, և նորից կրկնելով, թե ոճը հենց մարդն ինքն է, կարելի է ավելացնել, թե անդեմ մարդը ոճ չունի, այսինքն՝ սեփական խոսելաձև, գրելաձև, պահվածքի ձև:

Լեզվական շտամպները հաճախակի են հատկապես դպրոցական շարադրություններում: Չզիտեմ ինչպես ձեր դպրոցում, իմ ժամանակ շարադրություններ կային, որ ձեռքից ձեռք անցնելով արտագրում էինք թաքուն, իսկ ով է գրել, ով է հեղինակը՝ անհայտ էր: Մտածելու, ստեղծագործելու, սեփական բառերով շարադրելու փոխարեն, որը նաև վտանգավոր էր, կարող էիր տառասխալներ անել, դիմում էինք փորձված միջոցին, արտագրում անսխալ ու անդեմ լեզվով գրված շարադրությունը: Ցավոք, հենց տառասխալով էլ գնահատվում էր շարադրությունը, իմաստին, լեզվին ու շարադրություն դարձնող չկար: Այսպես, հենց դպրոցից մեզ սովորեցնում էին լեզվական շտամպներին...»:

Մեծ Բրիտանիայի դպրոցներում Մեծ Բրիտանիայի պաշտոնյաները 11-18 տարեկան երեխաներին արգելում են դպրոցում խոսել ժարգոնով: Նույնիսկ «բարև», «հաջող» դիմելաձևեր երեխաները պետք է փոխարինեն պաշտոնական «բարի առավոտ» «ցտեսություն» արտահայտություններով: Արգելում են բոլոր խոսակցական կրճատումները: Իշխանությունները գտնում են, որ դպրոցներում թույլատրելի է միայն գրական անգլերենը: Նման պահանջների հիմնավորումը պարզ ցանկություն է՝ բարելավել դպրոցականների խոսքի մշակույթը և բառապաշարը: Պաշտոնյաները վստահեցնում են, որ դա ապագայում կբարձրացնի երեխաների մասնագիտական հնարավորությունները և աշխատունակության զարգացումը:

### Ի՞նչ է ժարգոնը

Գաղտնիք չէ, որ խոսակցական լեզուն հիմնականում «համեմված» է ժարգոնային բառերով: Այսօր ժարգոնով խոսելն առավել ընդունելի ու բնական է համարվում, քան մաքուր մայրենիով խոսելը: Տվյալ դեպքում խոսքն ամենևին գրքային կամ վերամբարձ ոճ մասին չէ, այլ այն մայրենի լեզվի, որն անշուշտ բավական ձևախեղումների է ենթարկվում հենց ժարգոնի պատճառով:

Ի՞նչ է ժարգոնը: Մասնագիտական կամ սոցիալական տարբեր խավի մարդիկ, բառ առ բառ, դարձվածք առ դարձվածք մեջտեղ եկած դիպվածաբանությունները կուտակելով, միևնույն լեզվի մեջ ստեղծում են տարբեր խոսվածքներ, որոնց «ժարգոն» անունն են տալիս: Շատ դեպքերում ժարգոնային բառերն ու դարձվածքները մտնում են ընդհանուր խոսակցական լեզու: Օրինակ՝ հաճախ ենք լսում «փափախ անել» դարձվածքը և հասկանում, որ դա նշանակում է՝ հավելյալ շահ ստանալ: Որտեղի՞ց է խոսակցական լեզու ներմուծվել այդ դարձվածքը: Պարզվում է, որ այն ժամանակ, երբ ավտոմեքենաներ քիչ կային, գյուղացիները, ովքեր դեռ մորթե փափախ էին դնում, մեքենաները կանգնեցնում էին՝ փափախներն առաջ մեկնելով: Մեկը դա կոչել է «փափախ անել», դարձվածքը տարածում է գտել, ու մի օր էլ այդ դիպվածաբանությունը «շոֆերական» ժարգոնից մտել է մեր խոսակցական (բայց ոչ գրական) լեզվի մեջ:

Լեզվաբանները տարբերակում են բազմապիսի ժարգոններ: Օրինակ՝ ըստ սոցիալական բաժանման՝ հայտնի են ազնվականության ժարգոն, գողերի ժարգոն, սալոնային ժարգոն, բուրժուական ժարգոն և այլն, ըստ մասնագիտական բաժանման՝ ռազմական, ծովային, մարզական, երկաթուղային և այլն:

Մեր հետազոտության առարկան դպրոցական և ուսանողական համացանցային ժարգոնն է, որը գուցեև այնքան չի տարանջատվում առօրյա խոսակցական լեզվից՝ ժարգոն կոչվելու համար, բայց պայմանաբար կարող է այդպես կոչվել:

Դպրոցականների շրջանում հաճախ է գործածվում «կայֆ բռնել» արտահայտությունը, որը տաքուկ բուն է դրել մեր դպրոցական-ուսանողական ժարգոնում:

**Կայֆ-ն** արաբերենից վաղուց ի վեր մեր լեզվին անցած քեֆ բառն է, ունի մի քանի իմաստ՝ խնջույք, կերուխում, հաճույք, վայելք, ցանկություն: Ասում ենք՝ քեֆ անել, քեֆը հարցնել, քեֆին դիպչել, իր քեֆին թողնել, քեֆ քաշել: Կարծես այսքան իմաստները բավական չեն, երիտասարդները բռնել են կայֆ-ի պոչից, որն անկոչ հյուրի պես եկել ու նստել է սեղանի գլխին, քեֆ-ը թողել ստվերում և դարձել դպրոցական ժարգոնի պարտադիր «գարդարանքը»: Հիմա բոլոր պատանիներն ու աղջիկները «կայֆ են բռնում», իսկ նա, ով «կայֆ չի բռնում» կամ դրա իմաստը չի հասկանում, դիտվում է որպես կյանքից հետ մնացած մարդ:

Չպետք է կարծել, թե մեր լեզվում միայն այսօրինակ օտարամուտ բառերն են աղավաղում: Ձևախեղման ենթարկվելու կամ սխալ կիրառության դեպքում լեզուն կարող են փչացնել նաև մայրենի լեզվի բառերը: Ունենք հստակ, ախորժալուր մի բառ՝ իսկապես: Բայց արի ու տես, որ այն փոխարինվել է **իսկականից** բառով: Ենթադրենք՝ մեկն ասել է անսպասելի մի բան: Լսողը չի հավատում. **իսկականի՞ց**, (իսկ առանձին դեպքերում՝ նաև **իսկականո՞ւց**) - հարցնում է զարմանքով: Իսկականից լաց եղա, իսկականից եմ խոսում, իսկականից գնացինք, իսկականից տեսանք, իսկականից կերանք, իսկականից լավ մարդ է, իսկականից գործ, իսկականից կայֆ բռնեցինք, իսկականից ծեծ կերանք:

Նկատելի է, որ դպրոցական ժարգոնում խոսքը կրճատելու միտում կա՝ մաթեմ, գրակ, հաջող, ֆիզկուլտ, կենսաբ և այլն: Այս բարեռում «ություն»-ների և այլ վերջածանցների կրճատման մեջ արտահայտվում է կարճ խոսելու ձգտումը, այսպես կոչված՝ «տնտեսական» օրենքը, որ հատուկ է ամեն մի խոսակցական լեզվի: Բայց ի՞նչն է ստիպում, որ «տանը չէ» ասելու փոխարեն սովորողներն ասեն «տունը չի», «ես գնացի» ասելու փոխարեն՝ «ես ցվրվա» և այլն:

Խոսողն իր մասին հաճախ է հոգնակի թվով խոսում (մենք սովոր չենք դրան), ինչը սեփական անձը կարևորելու մեկ այլ միջոց է:

### Ժարգոնի բնորոշ առանձնահատկությունները և տեսակները

Ուսումնասիրությունը պարզեց, որ գոյություն ունի դպրոցական համացանցային ժարգոնի չորս տեսակ.

**Զգացմունքային բացականչություններ.** սրանք արտահայտում են հույզեր, վերաբերմունք: Հիմնականում արտահայտվում են ձայնավորների կամ որոշ բաղաձայնների կրկնությամբ՝ ջաաաաան, սիրելիսսսս, սիրում եմ շաաատ և այլն: Երբեմն կիրառվում են նաև օտար բառեր (Waw, ОК, блин, крутяк, елы – палы և այլն):

**Հուզական բառեր և արտահայտություններ.** սրանք արտահայտում են խոսողի հուզական վիճակը և ներառում են այնպիսի բայեր, ինչպիսիք են՝ մանթո, շշմելու բան, ահավոր սիրուն, балдеть, кайфовать և այլն:

**Ոճական տարբեր իմաստներով գործածվող բառեր,** որոնք արտահայտում են խոսողի վերաբերմունքը: Մենթ, չմո, ծիտ, ծախող, դգիկ, հոգնած և այլն: Ռուսերենում այսպիսի բառեր են училка, классуха, որոնք բնավ չեն նշանակում «վատ ուսուցիչ» կամ «վատ դասղեկ», այլ միտված են այլոց աչքում տվյալ մարդկանց սոցիալական կարգավիճակը նվազեցնելուն և դրա հաշվին իրենց սեփական դերը մեծացնելուն:

**Զգացմունքային խոսույթներ.** ձևով սրանք նման են կոչի, նախաձեռնության, բայց, ի տարբերություն վերջինների, չեն ենթադրում հասցեատիրոջ կողմից խոսողի կամքի անհապաղ կատարում. մանավանդ հաճախ դա անտրամաբանական կարող է լինել: Այդպիսի խոսույթներից են «Մարդ բռներ ու բարկանար», «Մեկը լիներ, սրանց իրենց տեղը ցույց տար...», «Ինձ որ մնար...» և այլն:

#### Հանրաձանաչ սոցիալական ցանցեր

Աշխարհում կան բազմաթիվ սոցիալական ցանցեր: Մենք վերլուծել ենք Հայաստանում հայտնի ցանցերից մի քանիսը:

#### **Вконтакте:**

Եվրոպայի ամենամեծ սոցիալական ցանցն է, որի կենտրոնակայանը գտնվում է Սանկտ Պետերբուրգում: Կայքը հասանելի է բազմաթիվ լեզուներով, տարածված է հատկապես ռուսալեզու օգտատերերի շրջանում:

Հիմնադրվել է 2007 թվականի հունվարի 19-ին, հիմնադիրը Պավել Վալերիի Դուրովն է:

#### **Одноклассники**

Mail.RuGroup-ին պատկանող սոցիալական ցանց է, որը Հայաստանում ամենահայտնի կայքերի թվում զբաղեցնում է երկրորդ, Ադրբեջանում՝ չորրորդ, Ռուսաստանում՝ հինգերորդ, իսկ աշխարհում՝ 49-րդը տեղը:

Հիմնադրվել է 2007 թվականի հունվարի 12-ին, հիմնադիրը Ալբերտ Միխայիլի Պոպկովն է:

#### **Facebook**

Աշխարհի ամենամեծ սոցիալական ցանցն է, այցելուների թվով աշխարհում գրավում է 5-րդ տեղը: Հայտնի տարբեր ծառայությունների սեփականատեր է, ինչպիսիք են Instagram-ը, WhatsApp-ը:

Հիմնադրվել է 2004 թվականի փետրվարին: Հիմնադիրը Մարկ Յուկերբերգն է:

#### **Viber**

Այս հավելվածը հնարավորություն է տալիս ինտերնետ կապի կամ Wi-Fi-ի առկայության դեպքում անվճար զանգեր կատարելու, փոխանցելու տեքստային հաղորդագրություններ, նկարներ, տեսա և ձայնային հաղորդագրություններ, փաստաթղթեր և ֆայլեր:

Հիմնադրվել է 2010 թ. դեկտեմբերի 2-ին Իգոր Մագազիննիկի և Թալմոն Մարկոյի կողմից:

### **WhatsApp**

Անվճար ակնթարթային տեքստային հաղորդագրությունների հայտնի համակարգ է բջջային և ձայնային այլ հարթակների համար: Հնարավորություն է տալիս ուղարկելու տեքստային հաղորդագրություններ, պատկերներ, վիդեո և աուդիո տեղեկատվություն:

Հիմնադրվել է 2009 թվականի փետրվարի 24-ին: Հիմնադիրներ՝ Յան Կում, Բրայան Էքթոն:

### **Instagram**

Լուսանկարների, տեսանյութերի և տեքստային հրապարակումների գրառումների) ամենամեծ սոցիալական ցանցն է, որը հիմնադրվել է 2010թ. Քևին Միստրոմի կողմից:

### **Դպրոցական ժարգոնի ծագումը**

Դպրոցական ժարգոնի մասին մասնագիտական գրականության մեջ շատ քիչ տեղեկություններ կան, թեև այն միշտ էլ գոյություն է ունեցել: Պատճառը, թերևս, այն է, որ ժարգոնը բանահյուսության դրսևորումներից է, ուստի գրավոր չի արձանագրվել: Անցյալի ժարգոնին մասին խոսելիս ստիպված ենք հիմնվել գեղարվեստական գրականության, հուշերի և բանավոր հիշողությունների վրա: Ի դեպ, մինչև 19-րդ դարը դպրոցական ժարգոնի մասին տեղեկություններ ընդհանրապես չեն պահպանվել, եթե չհաշվենք առանձին բառեր, որոնք տեղ են գտել գեղարվեստական գրականության մեջ:

Ենթադրվում է, որ ժարգոնը չէր կարող լայնորեն կիրառվել արհեստկրատ ընտանիքների երեխաների շրջանում. նրանք հեշտությամբ կարող էին ընտրել ամենահարմար բառը այն օտար լեզուներից, որոնց սահուն տիրապետում էին: Իրական ժարգոնը, հավանաբար, հայտնվեց միայն այն ժամանակ, երբ դպրոց եկան հասարակ մարդկանց երեխաները:

Հետաքրքրականն այն է, որ աշակերտների ժարգոնն արտացոլում էր նրանց վեհ ծագումը, վերջին բառերը փոխառված էին ֆրանսերենից: Երեւի բոլոր դպրոցներում միշտ եղել են ու կլինեն ցանկացած մարդու համար հասկանալի այնպիսի բառեր: Քանի դեռ կան ուսանողներ և ուսուցիչներ, կլինեն «տնային», «հերթ», «ուսուցիչ», «ֆիզիկա», «գրակ», «մաթեմատիկա» և այլն: Բայց ակնհայտ է նաև, որ յուրաքանչյուր դպրոց ունի իր բառերը, որոնք այլ տեղ չեն օգտագործվում: Այսպիսով, ժարգոնը եղել է, կա և կլինի դպրոցական բառապաշարում: Դա լավ է, թե վատ՝ միանշանակ չի կարելի ասել: Սակայն ակնհայտ է, որ ժարգոնը չի կարելի ո՛չ արգելել, ո՛չ վերացնել. Այն փոխվում է ժամանակի ընթացքում. որոշ բառեր մահանում են, մյուսները հայտնվում են, ինչպես ցանկացած այլ լեզվում:

Իհարկե, վատ է, եթե ժարգոնը լիովին փոխարինում է մարդու նորմալ խոսքին, բայց ժամանակակից դպրոցականին ընդհանրապես անհնար է պատկերացնել առանց ժարգոնի: Պատճառներից կարող են լինել ժարգոնի արտահայտչականությունն ու հակիրճությունը: Հենց այս



հանգամանքով է պայմանավորվում նաև ներկայումս ժարգոնի լայն գործածությունը համացանցում:

Անգամ պետական բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց ելույթներում ժարգոնային արտահայտություններ են օգտագործում: «Եթե բռնենք նրանց զուգարանում, ապա կթրջենք (будем мочить) զուգարանում», - ահաբեկիչների մասին ասել է Վ.Վ. Պուտինը: «Փռել ասֆալտին», - ասում է ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը: Հետևաբար, չի կարելի ժարգոնին վերաբերվել որպես մի բանի, որը միայն աղոտոտում է լեզուն: Այն մեր խոսքի անբաժանելի մասն է, իսկ վերջին ժամանակներում մեր խոսքում իր կամյուն տեղն է զբաղեցնում համացանցային ժարգոնը:

Համացանցային ժարգոնի ձևավորման պատճառները

Համացանցային ժարգոնում նոր բառերը ի հայտ են գալիս աննախադեպ արագությամբ: Պատճառը, իհարկե, տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների արագ, «թռիչքային» զարգացումն է: Գրեթե ամեն շաբաթ մի նորույթ է ծնվում S2S շուկայում, ինչն իր հետ բերում է նոր բառեր, ինչպես նաև ժարգոնային նոր անվանումներ:

Եվ քանի որ S2S ոլորտի գրեթե բոլոր նորությունները հիմնականում գալիս են Ամերիկայից, բնականաբար դրանք ստանում են անգլերեն անվանումներ: Մյուս երկրներում երկար ժամանակ օգտագործվում են փոխառնված եզրույթներ, որոնք ոչ անգլիախոս երկրներում փոխարինվում են ժարգոնով՝ **կոմսյ** (համակարգիչ), **գուգլել** (Google հարթակում որոնել), **սքան** կամ **քոֆի** անել (պատճենել), **ինսերթ** կամ **փասթ** (ներդնել), **քաթ** (կտրել), **քենսլ** անել (չեղարկել) և այլն:

Մասնագիտական եզրույթներից շատերը բավականին բարդ ու անհարմար են ամենօրյա օգտագործման համար, ինչի հետևանքով առաջանում է բառերը կրճատելու և պարզեցնելու հզոր միտում: Օրինակ, ամենահաճախ օգտագործվող տերմիններից մեկը «motherboard»-ն է, որը ռուսերենում կոչվում է «материнская плата», իսկ հայերենը չունի իր համարժեքը և օգտագործում է անգլերեն կամ ռուսերեն եզրույթը կամ դրա ժարգոնային բառը՝ «մայրիկ» կամ «մատրյոշկա»: «CD-ROM Drive»-ը ռուսերեն թարգմանվում է «լազերային սկավառակ», ժարգոնում այն ունի «sidyuk», «sidyushnik» համարժեքները:

Վերջին ժամանակներում երիտասարդների շրջանում նկատվում է համակարգչային խաղերի մոլուցք, ինչն իր հերթին առաջ է բերել նոր բառեր:

Անգլերեն բառերի գործածությունը դարձել է մի տեսակ մոդայիկ, դա պայմանավորված է երիտասարդական հասարակության մեջ ստեղծված կարծրատիպերով և իդեալներով: Մեր դարաշրջանի այս կարծրատիպը իդեալականացված ամերիկյան հասարակության կերպարն է, որտեղ կենսամակարդակը շատ ավելի բարձր է, իսկ տեխնոլոգիական առաջընթացի բարձր տեմպերը առաջնորդում են ամբողջ աշխարհը:

Եվ իրենց խոսքում ավելացնելով անգլերեն փոխառություններ՝ երիտասարդները որոշակիորեն մոտենում են այս կարծրատիպին և ծանոթանում ամերիկյան մշակույթին ու ապրելակերպին: Հենց այս խմբում է տեղի ունենում անգլերեն բառի հայերեն, ռուսերեն կամ

պարզապես սխալ ընթերցում: Երբեմն սխալն այնքան գրավիչ է դառնում, որ գրավում է զանգվածներին:

Համացանցային լեզվի որոշ առանձնահատկությունների մասին

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հանգեցրել է խոսքի փոխանցման նոր ձևի առաջացմանը, որը համատեղում է նախկինում գոյություն ունեցող ձևերի հատկանիշները /Аврамова, 2010/: Եթե նախկինում խոսքի փոխանցման կապուղիները սերտորեն փոխկապակցված էին լեզվի գոյության հիմնական ձևերի հետ՝ **բանավոր**, որը բնական կապի միջոց է և խոսքի փոխանցման անմիջական կապուղի, և **գրավոր**, որն արհեստական կապի միջոց է և խոսքի փոխանցման միջնորդավորված կապուղի, ապա 21-րդ դարի սկզբին կապուղիների այդպիսի հստակ տարանջատումը դարձավ անհնար: Էլեկտրոնային հաղորդակցությունը փոխգործակցության սկզբունքորեն նոր ձև է, որի հետազոտման համար անհրաժեշտ է այն հարաբերակցել արդեն գոյություն ունեցող ձևերի հետ և դրա հիման վրա սահմանազատել հաղորդակցման այդ նոր տեսակը: Համացանցով հաղորդակցման ձևը կապված է թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքի հետ:

Ի տարբերություն խոսքի այլ տեսակների (գրավոր, բանավոր, պատկերային, ոչ խոսքային և այլն)՝ համացանցից օգտվողը տեղեկատվությունն ուղարկելուց առաջ հնարավորություն ունի խմբագրելու դրանք, այսինքն՝ իրականացնելու իր կողմից օգտագործված լեզվական միջոցների գիտակցական վերլուծություն: Այս իմաստով համացանցային լեզուն պետք է դասվի գրավոր խոսքի շարքը, քանի որ բանավոր խոսքում խոսույթի ձևավորման գործընթացը տեղի է ունենում մտածելու գործընթացին զուգահեռ, և ուղղել ու խմբագրել արդեն ասվածը հնարավոր չէ: Թվում է, թե այս հանգամանքը պետք է նպաստի լեզվի գրագետ և հղկված լինելուն, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համացանցով հաղորդակցության լեզուն աչքի է ընկնում բազմաթիվ անճշտություններով և սխալներով: Այդ առումով, առաջին հերթին, պետք է նշել ուղղագրական կանոնների անտեսումը: Համացանցից շատ օգտվողներ բառերը գրում են այնպես, ինչպես դրանք արտասանվում են: Նախադասության առաջին բառերը կամ հատուկ անունները հաճախ գրվում են փոքրատառերով: Բացի այդ, որոշ բառերի գրաֆիկական ձևերը հաղորդակցվողների կողմից հատուկ մոտեցվում են դրանց հնչյունային ձևերին՝ հիշեցնելով ավելի շատ բառի տառադարձություն: Առավել հաճախ նման ձևերը կիրառվում են ակնթարթային հաղորդակցությունների («ICQ կամ «Chat») ժամանակ, այսինքն՝ առցանց ռեժիմով, ինչպես նաև հաղորդակցության ոչ համաժամանակյա ձևերում՝ ֆորում, բլոգ, էլեկտրոնային նամակ և այլն:

Պետք է նկատել, որ համացանցով հաղորդակցության ժամանակ ուղղագրության կանոնների խախտումներն ինչ-որ հաղորդակցական նորմի խախտում չեն համարվում և չեն ընկալվում որպես անհարգալից վերաբերմունք գրուցակցի նկատմամբ: Չնայած այն հանգամանքին, որ համացանցով հաղորդակցության ժամանակ հաղորդակցվողների տեքստերը գրավոր ամրագրվում են, համացանցից օգտվողների կողմից առցանց

հաղորդակցությունն ընկալվում է որպես գրույց, ոչ թե նամակ: Հետևաբար նրանք փորձում են այդ տեքստերը մոտեցնել գրույցի համար կիրառվող բանավոր ձևին: Բացի այդ, այստեղ կարելի է խոսել նաև հաղորդակցվողների ժամանակի և ջանքերի խնայողության մասին /Бергельсон, 2002: 58/:

Չնայած առցանց հաղորդակցության ժամանակ հաղորդակցվողները հնարավորություն ունեն հաղորդագրությունն ուղարկելուց առաջ ուղղել առկա սխալները, սակայն նրանք հազվադեպ են օգտվում այդ հնարավորությունից: Եթե ինչ-որ ուղղումներ արվում են, ապա միայն այն դեպքում, երբ սխալները փոխում են արտահայտության իմաստը, և միայն այն բանից հետո, երբ հաղորդագրությունն արդեն ստացվել և ընթերցվել է հասցեատիրոջ կողմից:

Համացանցից օգտվողների խոսքի յուրահատկությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ այն չի կարելի համարել ավանդական իմաստով գրավոր խոսք: Մակայն չի կարելի նաև պնդել, որ համացանցում մենք գործ ունենք միայն բանավոր խոսքի գրավոր ամրագրման հետ, քանի որ այն ներառում է նաև գրավոր խոսքին բնորոշ շատ առանձնահատկություններ:

#### Բառերի դիտավորյալ աղավաղված գրություն

Դիտավորյալ, միտումնավոր արված տառասխալը համացանցային լեզվի առանձնահատկություն է. այն չպետք է շփոթել անգրագիտության, չիմացության . հետ: Եթե ժամանակին այս «աղավաղված լեզուն» հատուկ էր համացանցից օգտվող մարդկանց համեմատաբար փոքր խմբերի, այսպես ասած՝ մասնագիտական ժարգոն էր, այժմ այն դարձել է խիստ տարածված:

Նկատենք, որ բառերի դիտավորյալ աղավաղված գրությունը հատուկ է ոչ միայն հայալեզու համացանցին: Այն շատ տարածված ր, օրինակ, ռուսալեզու համացանցում՝ Ռուսներում (նույնիսկ հատուկ անուն ունի՝ олбанский или язык/жаргон пАдонков), թեև այնտեղ այլ՝ ավելի հստակ կանոններ են գործում: «Օլբաներենի» հիմնական կանոնն այն է, որ բառերի գրությունը հնարավորինս աղավաղվում է կամ մոտ է խոսակցական արտասանությանը, խախտվում են ուղղագրության/ուղղախոսության գրեթե բոլոր նորմերը:

Հայալեզու համացանցում բառերի աղավաղված գրության «կանոնները» բավականին տարբերվում են վերը նշված «օլբաներենից», թեև նմանություններ ևս կան:

ա) Հաճախ են աղավաղված գրվում քաղաքական, հասարակական գործիչների, հայտնի մարդկանց անունները. այս միջոցով հիմնականում արտահայտվում է արհամարհանք, հեզմանք, ծաղր՝ Պուժին, Գայլուստ Սահակյան, Աշոժյան, Ադետ Բարսեղյան, Ահավոր Ադիբեկյան ևն:

Կարող են աղավաղված գրվել նաև հասարակ անուններ՝ բոզտիկան (նոտիկան), իքսպերդ (expert, эксперт (բառն այս աղավաղված ձևով փոխառել ենք Ռուսներից), էկոլոխ (էկոլոգ), անվոռուկ (անմոռուկ), վթարանդի (վտարանդի) ևն:

Այս բառերի մի մասը դուրս է գալիս համացանցի սահմաններից, հայտնվում նաև բանավոր խոսքում՝ համալրելով խոսակցական լեզվի բառապաշարը:

բ) Տարածված են նաև այսպես կոչված ռուսական արտասանություն կեղծող ձևերը՝ ինծիլի-գենտ, կրեածիվ, իձեա, բուծիկ, իձիոտ, Վիկիպեձյա՝ ինտելիգենտ, կրեատիվ, իդեա, բուտիկ, իդիոտ, Վիկիպեդիա ևն ձևերի փոխարեն (անգլերենի արտասանություն կեղծող ձևերն անհամեմատ քիչ են): Տ-երի, դ-երի քմայնացումը ե-ից ու ի-ից առաջ հայերենին հատուկ չէ, դա ռուսերենի ազդեցությունն է: Այսպիսի արտասանությունը քաղբենիություն է համարվում և դառնում հեզանքի առարկա: Սակայն գրության այս ձևերն այնքան են տարածվել, որ այժմ գրեթե սովորական են դարձել, և միշտ չէ, որ հեզանքի նպատակ ունեն: Նշենք, որ Վիկիպեձյա, Իսլանձյա ձևերի մեջ ձյա-ն նաև ճյա-ն է (ձյա կամ ձաձ դիմելաձևը պատանեկան/երիտասարդական ժարգոնում հարգանքի նշան է):

գ) Բավականին տարածված են դիտավորյալ արված այնպիսի սխալները, որոնք հատուկ են ոչ այնքան գրագետ մարդկանց արտասանությանը՝ աԲրանք, աԲրել, դԲրոց, փԴել, սուԹ, հանԳարծ, մեՇկ, աՇկ, ոՇ մեկ, կԴրվել (քննությունից) ևն: Բանավոր խոսքում նման արտասանությունը հատուկ է կրթական բավականին ցածր մակարդակ ունեցող շերտին, որոշ դեպքերում՝ պատանեկան-երիտասարդական ժարգոնին կամ էլ բարբառի ազդեցություն է (նկատի ունենք այն դեպքերը, երբ բարբառախոս մարդը խոսում է գրական կամ խոսակցական լեզվով): Իսկ դիտավորյալ արված այս սխալները համացանցային լեզվում սովորաբար կատակի, հեզանքի, ծաղրելու նպատակով են գործածում:

դ) Որոշ բաղաձայններ կրկնակ (երբեմն նույնիսկ եռյակ) են գրվում՝ աննասուն, եզզ կամ եզզզ, էշշի մեկը, շշշել ևն. սրանք ևս բառի դիտավորյալ աղավաղված գրություն են և համապատասխանում են բանավոր խոսքում այդ հնչյունների երկար արտասանությանը:

դ) Այս կամ այն ձայնավորի երկար արտասանությունը հաճախ է հանդիպում բանավոր խոսքում. այդ միջոցով արտահայտում ենք հույզեր՝ ուրախություն, զարմանք, զայրույթ, անհամաձայնություն, հեզանք ևն: Համացանցային լեզվում դրան փոխարինում է նույն ձայնավորի բազմակի գրությունը՝ մեռաաաաաա, երեխեեեեեեք, իիիիիիիիի<sup>օ</sup>նչ, էէէէէէէէէ, աաաաաաաաաա ևն: Գրության այս ձևը ցույց է տալիս հատկանիշի, երևույթի գերադրական աստիճան:

#### Մեծատառերով գրություն

Քանի որ համացանցում, սոցցանցերում շփումը գրավոր է, և խոսակիցները իրար չեն տեսնում, այսինքն՝ չեն կարող գործածել ժեստեր, միմիկա, ցուցադրել հույզերը, ձայնի տոնը ևն, ուստի բանավոր խոսքին հատուկ ոչ վերբալ այդ միջոցներն արտահայտում են այլ եղանակներով:

ա) Տեքստն ամբողջությամբ մեծատառերով գրելը կարող է նշանակել, որ

- խոսողը զայրացած է/բարձրաձայն է խոսում.
- կարևորում է իր ասածը/ցանկանում է ուշադրություն հրավիրել իր ասածի վրա

Բանավոր խոսքում սա արտահայտվում է ձայնի բարձրությամբ, հուզական միմիկայով, կարող է ուղեկցվել բավականին ակտիվ ժեստիկուլյացիայով:

Նկատենք, որ երբեմն ամբողջ տեքստը մեծատառով են գրում համացանցում համեմատաբար նոր հայտնված մարդիկ, որոնք պարզապես չգիտեն, թե իրականում ինչ հատուկ նպատակով են գործածվում մեծատառերը: Նրանց մեջ շատ են հատկապես լատինատառ գրողները դա նյարդայնացնում է «հնարակներին», քանի որ էլ ավելի դժվարընթեռնելի է դարձնում տեքստը:

բ) Տեքստում որևէ բառ, բառակապակցություն մեծատառերով գրելը նշանակում է, որ խոսողն այդ բառին կարևորություն է տալիս, ուզում է շեշտել այն. համապատասխանում է բանավոր խոսքում բառի շեշտված արտասանությանը.

Համացանցային այն հարթակներում, որտեղ կա հնարավորություն, կարևոր բառը, բառակապակցությունը կարող է գրվել նաև թավ, շեղ կամ հիմնական գույնից տարբերվող գույնով:

գ) Բառի մեջ արված տառասխալը մեծատառով գրելը նշանակում է, որ գրողը գիտի բառի ճիշտ գրությունը, սխալը դիտավորյալ է արված՝ մոռթել, ռոմանՕիկ, նեՌվային, հաՌՓած, կՌՏություն, գորՁ, երԳիրը երԳիր չի, դուրԸս գալիս է նն:

դ) Բառի մեջ որոշ տառեր մեծատառով գրելը բառախաղի արտահայտման միջոց կարող է դառնալ՝ ՄՏՐՈՒԿտուրա, նախԱԳԱՀ, մշՆԱԽ, ՓՈՂնախարար, ԿՌՏության նախարարություն, ՄՏՈՐադասական նն:

#### Արագագրություն և ժամանակի խնայողություն

Սոցցանցերում, չատում մարդիկ ստիպված են շատ արագ գրել, հատկապես երբ քննարկմանը, երկխոսությանը մասնակցում են մի քանի, երբեմն մի քանի տասնյակ կամ ավելի հոգի: Արագ են գրում նաև անձնական նամակագրությունը: Այստեղ հաճախ կարևորվում է ոչ թե գրական լեզվի կանոնների պահպանումը, այլ պարզապես ինֆորմացիայի փոխանակումը: Մա է պատճառը, որ.

ա) վերջակետից հետո, նաև նախադասության սկզբում երբեմն փոքրատառով են գրում, քանի որ մեծատառ գրելու համար ավելորդ ստեղն պիտի սեղմեն, իսկ դա ժամանակ է խլում:

Երբեմն էլ արագ գրելիս պարզապես մոռանում են դրա մասին: Ի դեպ, սա նաև տեխնիկական խնդիր է. կան ստեղնաշարեր, որոնցով մեծատառ գրելու խնդիրներ չեն առաջանում, քանի որ

նախադասության սկզբում և վերջակետից հետո առանց ավելորդ ստեղն սեղմելու մեծատառ է գրվում:

բ) Բառերով, իսկ բանավոր խոսքում նաև ժեստերով, միմիկայով, հնչերանգով արտահայտվող հույզերը փոխարինվում են զանազան սմայլիկներով: Սմայլիկները հնարավոր է ստանալ տարբեր նշանների ու տառերի համադրությամբ՝

:) - ժպիտ,

:(- տխրություն,

:D - ծիծաղ,

:P - լեզու ցույց տալ նն:

Հայալեզու համացանցում շատ են հանդիպում նաև այս սմայլիկների «հայացված» տարբերակները: Օրինակ՝ լատինատառ ստեղնաշարի փակող փակագծի տեղում հայերեն ստեղնաշարում ճ տառն է, և երբ արագ գրելիս մարդը չի փոխում ստեղնաշարի լեզուն, :) գրելու փոխարեն գրում է :Ճ (Ժպիտ): Այդպես նաև :Չ (տխրություն), :Պ (լեզու ցույց տալ), :Դ (ծիծաղ) ևն.

Կարևոր ենք համարում նշել, որ սմայլիկները գործածվում են ոչ միայն արագ գրելու նպատակով: Գրավոր հաղորդակցման թերություններից մեկն այն է, որ խոսակիցներն իրար չեն տեսնում ու չեն լսում, այսինքն՝ այն ամենը, ինչ բանավոր խոսքում հնարավոր է արտահայտել (կամ ասելիքը լրացնել) ոչ վերբալ միջոցներով՝ դիմախաղով, ժեստերով, տրամաբանական շեշտով, հնչերանգով ևն, հնարավոր չէ գրավոր խոսքում: Իսկ դա շատ կարևոր է, քանի որ նույն նախադասությունը կարող է միանգամայն տարբեր բաներ նշանակել կամ ընկալվել տարբեր կերպ՝ կախված խոսողի ժեստերից, միմիկայից, հնչերանգից: Եվ սմայլիկները գրավոր խոսքում գոնե մասամբ փոխարինում են բանավոր խոսքի ոչ վերբալ միջոցներին:

զ) Արագ գրելու, ժամանակ խնայելու նպատակով շատ են գործածվում նաև զանազան հապավումներ, հաճախ հենց անգլերեն. օրինակ՝ OMG (Oh my god!՝ աստված իմ), LOL (laugh(ing) out loud կամ lots of laughs՝ բարձրաձայն ծիծաղ), R.I.P. (լատ. Requiescat in pace/անգլ . Rest in peace). համապատասխանում է հայերենի «Աստված հոգին լուսավորի» արտահայտությանը) ևն:

դ) Հանդիպում է նաև համառոտագրությունը/կրճատ գրությունը՝ մեկնաբ. (մեկնաբանություն/մեկնաբանել), հմմտ., փխն, փխբ., տրմբն., բորն. ևն:

Ի դեպ, վերջին երեք միջոցը բավականին տարածված է նաև ձեռագիր գրելիս, հատկապես որևէ բան կոնսպեկտելիս, դասախոսությունները գրի առնելիս: Ուսանողների մեծ մասն ունի պայմանական նշանների, կրճատ գրության իր համակարգը (օր.՝ -ություն-ի փոխարեն՝ + կամ 8+, ային-ի փոխարեն՝ \* (կամ որևէ այլ նշան), = (հավասար/հավասարություն), { } (համակարգ) ևն: Համառոտագրությունները, կրճատ գրությունը, հապավումները շատ տարածված են նաև գիտական ու պաշտոնական ոճերում, բառարաններում՝ տեղի խնայողության նպատակով:

ե) Բառերի փոխարեն երբեմն գրում են թվեր՝ 3շաբթի, 5շաբթի ևն: Ստեղնաշարի վրա հայերեն մի քանի տառերի տեղը չի համապատասխանում լատինատառ ստեղնաշարին. օրինակ՝ թ, փ, ձ, ջ, շ-ն ևն գտնվում են թվերի կամ նշանների տեղում, և լատինատառ ստեղնաշարին սովոր մարդկանց մեծ մասը դժվարանում է հիշել այս կամ այն տառի տեղն ու արագ գրելիս դրանց փոխարեն թվեր է գրում (օր.՝ ջ-ի փոխարեն՝ 4 (չորս)՝ 4գիտեմ (կամ 4gitem):

Նշենք, որ գրության այս եղանակը հազվադեպ է հանդիպում հայատառ գրողների շրջանում:

զ) Համացանցային առօրյա հաղորդակցման ժամանակ շատ հաճախ խախտվում են կետադրության կանոնները: Անգամ կանոններն իմացող մարդկանցից շատերն արագ գրելիս մի տեսակ անտեսում են կետադրությունը՝ առանձնապես մեծ կարևորություն չտալով դրան:

Հայերեն ստեղնաշարի վրա ոչ բոլոր նշաններն են հասանելի տեղերում. երբեմն հարկ է լինում ավելորդ ստեղն սեղմել, իսկ որոշ նշաններ էլ ուղղակի հարկ է լինում ներմուծել այլ ձևերով, քանի որ որոշ հայերեն ստեղնաշարերի վրա բացակայում է այս կամ այն կետադրական նշանը: Մի կողմից՝ դա ժամանակի կորուստ է, մյուս կողմից էլ՝ հայերենի կետադրության կանոնները երբեմն անհարկի բարդ են, և մարդիկ դրանց նպատակը չեն հասկանում: Հաշվի առնենք նաև այն, որ վերջին մի քանի տասնամյակում կետադրության կանոնները մի քանի անգամ փոխվել են, իսկ դպրոցից հետո շատ քիչ մարդիկ են նորից սովորում կանոններ:

Ի դեպ, նշենք, որ բավականին հաճախ են գործածվում նաև հայերենին ոչ հատուկ կետադրական նշաններ, հիմնականում ? և ! : Պատճառը ոչ միայն այն է, որ երբեմն հայերեն կետադրական նշանները դժվարհասանելի տեղերում են, ինչպես արդեն ասել ենք, այլ նաև այն,

որ սրանց կարիքն իրականում կա: Հայերենն, ինչպես գիտենք, այն բացառիկ լեզուներից է, որ հնարավորություն ունի տրամաբանական շեշտը (շեշտ, հարցական, բացականչական) դնելու բառի վրա, սակայն երբեմն կարիք է լինում շեշտելու ամբողջ նախադասությունը, սաստկացնելու իմաստը: Նման դեպքերում կարող է որևէ բառի վրա դրվել հայերեն հարցական կամ բացականչական նշան, իսկ նախադասության վերջում՝ ???, !!! կամ ?! : Այս նշանները կարող են դրվել նաև որևէ բառի կողքին՝ փակագծով՝ տվյալ բառը շեշտելու, ընդգծելու նպատակով (այս նշանները գործածվում են նաև գեղարվեստական գրականության, հրապարակախոսության մեջ, նաև գիտական ոճում):

Պայմանական նշանների, սիմվոլների այլ կիրառություններ

Պայմանական զանազան նշաններն ու սիմվոլները կիրառվում են նաև իբրև մեղմասության ձև: Համացանցային լեզվում բավականին տարածված է որևէ գռեհիկ, հայհոյական կամ ուղղակի ոչ այնքան պարկեշտ համարվող բառի մեջ որոշ տառերի փոխարեն զանազան նշաններ, սիմվոլներ, օտար այբուբենի տառեր գործածելը՝ ք\*քմեջ անել, գ7, &ի&իկ, սեx, սի#%իր, ո\*ի, ռուսերենից փոխառած գռեհկաբանությունների մեջ՝ պի%եց , նա#ույ, 3,14գդեց (π թվից) ևն: Այս միջոցը հատկապես շատ է հանդիպում ռուսալեզու տիրույթում, որտեղ հայհոյական, գռեհիկ բառերն անհամեմատ հաճախ են գործածվում:

Հետաքրքիր է նաև այսպես կոչված գրած-ջնջած տեքստը, երբ մարդը գրում է այն բառը/բառակապակցությունը, որն իրականում ուզում էր գրել, սակայն վրան գիծ է քաշում՝ փոխարինելով այլ բառով (հաճախ դա համանուն կամ հարանուն է լինում): Այս հնարքն օգտագործվում է, օրինակ, գռեհիկ, հայհոյական կամ վիրավորական բառերից իբր խուսափելու նպատակով, այն դառնում է նաև բառախաղի, երգիծանքի միջոց:

Համապատասխանում է բանավոր խոսքի այն իրավիճակին, երբ մարդը կիսատ կամ գրեթե անլսելի է արտասանում գրեհիկ, կոպիտ համարվող բառը.

Գրած-չնչած բառի/բառակապակցության փոխարեն գործածվում է նաև գրության հետևյալ ձևը. այն բառը, որից իբր ցանկանում են խուսափել, գրում են կիսատ, ապա կետեր դնում և ուրիշ բառ գրում. մի ~~թեթե~~ սեթևեթաբարո աղջիկ, ~~հիմար~~ չմտածված արարք, ~~ստահող~~ ոչ ճիշտ տեղեկատվություն և այլն:

Այլատառ հայերեն

Այլատառ հայերենը՝ տրանսլիտը (հիմնականում լատինատառ և կիրիլիցայով) չափազանց տարածված է համացանցում: Նույնիսկ նոր բառեր են ստեղծվել երևույթը նկարագրելու համար՝ տրանսլիտահայերեն, խառնատառ, նորբուբեն ևն: Եթե ժամանակին համացանցում լատինատառ գրելը միակ տարբերակն էր, քանի որ հայատառ գրելու տեխնիկական հնարավորություն չկար, ապա այսօր դա արդարացում չէ: Սակայն այլատառը շարունակում է գոյություն ունենալ, այդ թվում և համացանցից դուրս (մակագրություններ փողոցներում, շենքերի պատերին ևն):

Գրեթե առանց բացառության լատինատառ են տարբեր նախարարությունների, պետական ու մասնավոր ընկերությունների, կառույցների՝ հեռախոսով ուղարկվող կարճ հաղորդագրությունները: Անգամ Մայր Աթոռն է շնորհավորական sms ուղարկում լատինատառ հայերենով, ինչը պարբերաբար դառնում է քննադատության ու ծաղրի առարկա: Հանուն արդարության ասենք, որ որոշ օպերատորներ հնարավորություն են տալիս կարգավորումների միջոցով ընտրելու կարճ հաղորդագրությունների լեզուն, սակայն լռելյայն (by default) այն լատինատառ է: Հաճախ են լատինատառ/կիրիլիցայով գրում նաև Հայաստանից դուրս ապրող մարդիկ, որոնք հայերեն (արևելահայերեն, արևմտահայերեն կամ բարբառով) խոսել գիտեն, սակայն գրել-կարդալ՝ ոչ:

Լատինատառը գերիշխում է զանազան լրատվամիջոցների մեկնաբանությունների բաժնում: Երևույթն աղետալի չափերի է հասնում *Одноклассники* կայքում, որտեղ այլատառ գրողները մեծամասնություն են: Բացի դրանից, նշված կայքում գործում են «ուղղագրության» բացառիկ կանոններ». հատկապես անունների մեջ տառերի մի մասը մեծատառ է, մի մասը՝ փոքրատառ, որոշ տառեր այլ լեզվով են, որոշ տառերի փոխարեն զանազան սիմվոլներ են ևն.

Հետաքրքիրն այն է, որ հենց իրենք՝ լատինատառ գրողները խոստովանում են, որ մեծ մասամբ չեն կարդում լատինատառ երկար գրությունները: Ուսանողների շրջանում մեր անցկացրած բանավոր հարցումները ևս հաստատում են դա: Պատճառն այն է, ինչպես նշում են հարցման մոտ 200 մասնակիցները, որ մի քանի տողից ավելի լատինատառ կարդալը շատ դժվար է, աչքերը շուտ են հոգնում, զանազան նշաններով ու սիմվոլներով խճողված տեքստը երբեմն անհասկանալի է: Եթե չհաշվենք հայերեն գրել-կարդալ չիմանալու պատճառով այլատառ գրողներին, ապա մյուսները նշում են մի քանի հիմնական պատճառ.

ա) ծուլանում են փոխել ստեղնաշարի լեզուն.

բ) սովորություն է.



զ) չունեն հայատառ գրելու տեխնիկական հնարավորություն.

դ) լատինատառ ավելի արագ են գրում, քան հայատառ.

ե ) այդպես թաքցնում են իրենց ուղղագրական սխալները:

Ասենք, որ հայատառ գրելու հնարավորություն այսօր ունի հեռախոսների մեծ մասը, այնպես որ դա պատճառ չէ իրականում: Ավելի արագ գրելը ևս մի՞ջ է. հայերեն մի տառի փոխարեն (օրինակ՝ չ, ճ կամ ց) լատինատառ գրելիս հարկ է լինում երկու ստեղծ սեղմել (չ-ch, ց- ts ևն): Թերևս մնում է երկու հիմնական պատճառ՝ սովորություն է, որից դժվար է հրաժարվելը, մի մասն էլ խոստովանեց, որ այդպես փորձում է թաքցնել ոչ գրագետ գրելը:

Երկար ժամանակ տրանսլիտով գրողների մեջ հաճախ են հանդիպում անգամ հայատառ գրելիս «տրանսլիտահայերեն» գրողներ ներքևում բերված օրինակներում . սխալների պատճառը լատինատառ գրելուն սովոր լինելն է.

Սա իրականում շատ մեծ խնդիր է դարձել այսօր այս հայատառ . «լատինները» հայտնվում է նաև համացանցից դուրս: Տարիներ շարունակ լատինատառ գրող բազմաթիվ մարդիկ ձեռագիր գրելիս էլ են տառասխալներ անում անգամ այն բառերի մեջ, որոնց ուղղագրությունը սկզբունքորեն գիտեն:

Սակայն քիչ չեն նաև դեպքերը, երբ հայատառ են գրում խոսակցական

արևելահայերենում հաճախ գործածվող ռուսերեն բառերը՝ դաժե, կստածի, լյուբոյ, ֆայո/վայո, ֆայո-տակի, կակ ռազ, վոբշըմ ևն: Մի կողմից՝ գրողը չի փոխում ստեղծաշարի լեզուն՝ ժամանակ ինայելու համար, մյուս կողմից էլ այդ բառերը մի տեսակ օտար չեն գիտակցվում, խոսակցական լեզվում «հայացվել են»:

Այսօր համացանցում լատինատառ, այլատառ հայերենի դեմ պայքարի ամենաարդյունավետ միջոցներից մեկն արգելքն է: Կան կայքեր, որոնք արգելում են այլատառ հայերենով գրված մեկնաբանությունները, ինչպես, օրինակ, <http://hetq.am/>-ը, «Առավոտ» օրաթերթը՝ <http://www.aravot.am/> ևն, կան ֆեյսբուքյան խմբեր, որտեղ այլատառ հայերենով գրված մեկնաբանությունները ջնջվում են, իսկ գրողին հեռացնում են խմբից, ինչպես, օրինակ,

«Մայրենի լեզվի դասեր»-ում: Կան նաև մարդիկ, որոնք արգելում են իրենց էջում այլատառ հայերեն գրել: Սա, իհարկե, միայն մասամբ է լուծում հարցը: Օգուտն ավելի շոշափելի կլինի այն դեպքում, երբ այլատառ մեկնաբանություններն արգելվեն ոչ թե մի քանի, այլ բոլոր կայքերում, խմբերում և էջերում, իսկ հայատառ գրողներն ավելի հետևողական լինեն: Պայքարն ավելի արդյունավետ է դառնում, երբ արգելքից բացի տարվում է բացատրական աշխատանք. խոսվում է այլատառ հայերենի թերությունների, հայատառ գրելու առավելությունների մասին, հայերեն ստեղծաշար տեղադրելու հարցում օգնություն է ցուցաբերվում: Այնուամենայնիվ լատինատառ/այլատառ գրելու դեմ պայքարը պետք է սկսվի դեռ դպրոցից, փոքր տարիքից, երբ երեխան նոր է սովորում օգտվել համակարգչից: Հետևողական պետք է լինեն թե՛ ծնողները, թե՛

ուսուցիչները: Այնինչ այսօր ցավալիորեն շատ ծնողներ, ուսուցիչներ իրենք են համացանցում լատինատառ գրում:

Բառապաշարի առանձնահատկություններ

Թեև համացանցում, մասնավորապես սոցցանցերում, հաղորդակցումը գրավոր է, այն շատ ավելի մոտ է բանավոր խոսքին հիմնական լեզուն խոսակցականն է, . ոչ թե գրականը: Այս լեզուն անվանում են նաև գրավոր-խոսակցական: Ընդգծենք, որ խոսակցական ասելով նկատի չունենք միայն այսպես կոչված փողոցի լեզուն. խոսակցականը, ի տարբերություն գրականի, շատ ավելի բազմաշերտ է՝ սկսած գրական-խոսակցականից մինչև բարբառախառն ու ժարգոնայինը: Ի դեպ, մեր բուհական դասագրքերի, բառարանների մեծ մասն այսօր չի արտացոլում խոսակցականում տեղի ունեցող փոփոխությունների իրական պատկերը:

Այնպիսի տպավորություն է, որ խոսակցական լեզվում 60-70-ականներից այս կողմ փոփոխություններ գրեթե չեն եղել: Եվ ընդհանրապես, ժամանակակից խոսակցական լեզվի մասին համակողմանի ուսումնասիրություններ հայ լեզվաբանության մեջ շատ քիչ են:

Համացանցում հաղորդակցման լեզվի ընտրությունը կախված է ոչ միայն մարդու կրթությունից, մասնագիտությունից, սոցիալական ու հասարակական դիրքից, տարիքից ու սեռից, այլև թեմայից, խոսքի նպատակից, այն լսարանից, ում ուղղված է, վիրտուալ խոսակիցների փոխհարաբերություններից ևն:

Եթե շփումն անձնական նամակագրության միջոցով է, իրար մոտիկից ճանաչողներն անհամեմատ ազատ են շփվում, և արագ գրելիս առանձնապես մեծ ուշադրություն չեն դարձնում կետադրությանը, քերականական, տրամաբանական և այլ սխալներին, հնարավոր են վրիպակներ, ուղղագրական սխալներ:

Զանազան թեմատիկ խմբերում, որտեղ սովորաբար հավաքվում են հիմնականում նույն կրթական մակարդակ, ընդհանուր հետաքրքրություններ ունեցող, հաճախ նաև նույն սերնդի մարդիկ, գործում են որոշակի ներքին կանոններ, գրված ու չգրված օրենքներ: Կախված խմբի բնույթից՝ շփումը կարող է լինել թե՛ գրական հայերենով (որը կարող է ներառել խոսակցականի որոշ տարրեր), թե՛ խոսակցականով, թե՛ ժարգոնով ու անգամ բարբառով:

Եթե գրածը նախատեսված է ոչ միայն ընկերների ու սահմանափակ թվով մարդկանց, այլև շատ ավելի մեծ լսարանի համար, մարդիկ, հատկապես հանրային դեմքերը (քաղաքական, հասարակական գործիչներ, գիտության բնագավառի ներկայացուցիչներ, լրագրողներ, արվեստի, մշակութի մարդիկ ևն) սովորաբար ավելի ուշադիր են սեփական սխալների նկատմամբ, խոսքն ավելի մոտ է գրականին, գրելուց հետո հնարավորություն ունեն խմբագրելու, ուղղելու, փոփոխություններ անելու:

Բազմազանությամբ հանդերձ՝ այնուամենայնիվ կարելի է արձանագրել, որ այսօր համացանցում շփման հիմնական լեզուն խոսակցականն է՝ գրական-խոսակցական, ժարգոնային-խոսակցական տարբերակներով: Իհարկե, կան նաև բացառապես գրականով լզրողներ, սակայն նրանց թիվն ընդհանուր ֆոնին մեծ չէ:

Փոխառություններ և համացանցային սլենգ

Համացանցային լեզվում հսկայական թիվ են կազմում նորագույն փոխառությունները:

Խոսքը ոչ թե առհասարակ վերջին տարիներին փոխառած բառերի մասին է, այլ հենց համացանցային փոխառությունների: Շատ են անգլերեն կամ ռուսերեն համացանցային լեզվից փոխառած բառերը: Այս բառերի մեծ մասը թերևս հասկանալի չէ համացանցից դուրս «ապրող» մարդկանց.

Բերենք որոշ օրինակներ.

Տրոլլ(թրոլլ), տ/թրոլլինգ (trolling)	չատ/չաթ (chat)
Ֆոլլոու/անֆոլլոու (follow/unfollow)	իգնոր (անել) (ignore)
լայք/դիսլայք I(like-dislike)	սպամ/սպամեր (spam/spammer)
շեյր (որից՝ շեյրել) (share)	ֆրենդ/անֆրենդ (friend/unfriend)
քոմենթ (որից՝ քոմենթել) (comment)	բլոկ (որից՝ բլոկել/բլոկ անել) (block)
ֆեյք (fake)	ֆրենդլիստ (friend list)
լուզեր (ժարգոն) (loser)	խոմյաչոկ (хомячок)
մեմ (meme)	սոաչ (ժարգոն) (срач)
քլիք (click)	գլյուկ (ժարգոն) (глюк, глючить)

Թեև որոշ օտար բառերի համար գրական լեզվում ունենք հայերեն տարբերակներ, սակայն դրանք երբեմն չեն գործածվում տարբեր պատճառով՝ անհամեմատ երկար են, անբարեհունչ են, չեն ծածկում օտար բառի բոլոր իմաստները, օտար բառն արդեն խիստ տարածված է նն: Օրինակ՝ մեկնաբանություն բառի փոխարեն հաճախ են գործածում քոմենթ, քանի որ այն ավելի կարճ է, իսկ համացանցային առօրյա շփման մեջ արագագորությունը, ժամանակի խնայողությունը, ինչի մասին արդեն խոսել ենք, կարևոր դեր ունեն: Իսկ ֆրենդն ու ընկերը իմաստային տարբերություն ունեն, թեև բառարանային համարժեքներ են. սովորաբար ընկերը գործածում են իրական կյանքում ընկերների մասին խոսելիս, իսկ ֆեյսբուքյան ընկերները՝ ֆրենդները, կարող են իրար բացարձակապես անծանոթ մարդիկ լինել, որոնք նույնիսկ համացանցում գրեթե չեն շփվում:

Կան նաև իմաստային նորաբանություններ, որոնց մի մասը դարձել է գործածական նաև համացանցից դուրս, մի մասը նոր իմաստով գործածվում է միայն համացանցային հարթակներում: Օրինակ՝ քաշել (download (գրական լեզվում՝ ներբեռնել), ջրցան (գոեհիկ իմաստ ստացավ էլեկտրաէներգիայի թանկացման դեմ ցույցերի օրերին), արտագաղթ («Օղնոկլասնիկից Ֆեյսբուք արտագաղթածներ»), հետևել/հետևորդ (follow, follower), հավանել (լայքել, like դնել) իսկ գաղջ ածականը գործածվում է նաև իբրև գոյական, բազմաթիվ իմաստներ է ձեռք բերել՝ կախված համատեքստից՝ գաղջը խեղդում է:

Համացանցը չափազանց արագ է արձագանքում մեր կյանքում տեղի ունեցող իրադարձություններին՝ ստեղծելով նորանոր բառեր կամ եղած բառերին նոր իմաստներ տալով՝ նոր երևույթներն արտահայտելու համար: Այդ բառերը սովորաբար կազմվում են հայերենին հատուկ բառակազմական եղանակներով, համաբանությամբ, թեև կան նաև ոչ գործուն կաղապարներով կազմված բազմաթիվ բառեր:

Նորակազմ բառերի մի մասն ընդամենը մի քանի անգամ գործածվելուց հետո մոռացվում է, մի շարք բառեր ավելի երկարակյաց են, իսկ որոշ բառեր արդեն հիմնավոր մտել են հայերենի բառապաշարի մեջ:

Գոեհկաբանություն, հասարակաբանություն, հայհոյական բառեր

Համացանցային լեզվի բառապաշարի առանձին շերտ են կազմում հասարակաբանությունները, գոեհկաբանություններն ու հայհոյական բառերը:

Մեր հասարակության մեջ, հատկապես Երևանում, մեծ քաղաքներում, ընդունված չէ հայհոյել կանանց, աղջիկների, տարիքով մեծերի ներկայությամբ: Նման խիստ տաբու չկա, օրինակ, ռուսերենում, անգլերենում, որտեղ հայհոյական բառերն այնքան հաճախ են գործածվում բանավոր խոսքում, որ դարձել են մի տեսակ սովորական ընկալվող, կորցրել խիստ գոեհիկ ընկալումը, հաճախ են հանդիպում ոչ միայն բանավոր, այլև գրավոր խոսքում (գեղարվեստական գրականություն, համացանց), հնչում են էկրանից՝ ֆիլմերում, երգերում ևն:

Սակայն վերջին երկու-երեք տարին նոր միտում է նկատվում նաև հայալեզու համացանցում. հայհոյական բառերը ավելի հաճախ են սկսել գործածել: Պատճառները մի քանիսն են: Նախ՝ համացանցում, սոցցանցերում կարելի է գրանցվել անանուն՝ առանց սեփական լուսանկարի, անձնական ճիշտ տվյալների, ինչը որոշակի ազատություն է տալիս մարդկանց, հնարավորություն ընձեռում անտեսելու հասարակական կարծիքը: Բայց միայն տվյալներով, սեփական լուսանկարով մարդիկ: Վիրտուալ տարածքը, այն փաստը, որ դիմացդ համակարգչի/ամարթֆոնի մոնիտորն է, ոչ թե կոնկրետ մարդ, որ խոսակիցներն իրար չեն տեսնում, թերևս պատրանք է ստեղծում անանունության, կոտրում որոշակի տաբուներ: Պատճառը ոչ այնքան լեզվական է, որքան արտալեզվական այս երևույթն . ուսումնասիրում են հոգեբանությունը, սոցիոլոգիան, մշակութաբանությունը, հարակից գիտությունները:

«Համացանցային հաղորդակցման առանձնահատկություններից է ոչ բնորոշ, ոչ նորմատիվ վարքը: Հաճախ սոցցանցերում օգտատերերն իրենց այլ կողմից են ներկայացնում, քան իրական կյանքում: Ասվածը բնորոշ է հատկապես ծանոթությունների կայքերի համար, որտեղ անանունությունն ինչ-որ չափով ազատություն է տալիս մարդկանց. այն, ինչ նրանք չեն կարող անել կամ ասել իրական կյանքում, քանի որ հասարակական կարծիքը, ընդունված նորմերը, չգրված օրենքները ճնշում են, ազդում նրանց վարքի վրա, անում/ասում են վիրտուալ տարածքում: Որքան շատ են տաբուները, արգելքները տվյալ հասարակության մեջ, այնքան մեծ է այդ տաբուները կոտրելու, դրանցից ազատվելու ձգտումը: Ու եթե իրական կյանքում դա ավելի դժվար է հաղթահարել, վիրտուալ իրականությունն այդ հնարավորությունը տալիս է: Հետաքրքիր է, որ հայալեզու տիրույթում հայհոյական բառերը հաճախ ոչ թե հայերեն են, այլ ռուսերեն կամ անգլերեն: Սա թերևս բացատրվում է նրանով, որ դրանք մեզ այնքան գոեհիկ չեն թվում, որքան հայերեն հայհոյանքները: Այն տպավորությունն է ստեղծվում, որ ռուսերեն կամ անգլերեն հայհոյական բառերը, գոեհկաբանությունները յուրօրինակ մեղմասության ձև են դարձել հայերենում, ընդ որում դրանք գրվում են հենց հայատառ, երբեմն որոշ տառերի փոխարեն զանազան սիմվոլներ գործածելով կամ բառը դիտավորյալ աղավաղելով, որ նույնպես մեղմասության ձև է դարձել համացանցային գրավոր խոսքում:

## Այլ առանձնահատկություններ

Հայալեզու սոցցանցերին հատուկ երևույթ է արևմտահայերենի գործածությունը հումորի, երգիծանքի, կատակի նպատակով: Գրության առանձնահատկությունն այն է, որ պահպանվում է արևմտահայերենի արտասանությունը՝ բաղասիսան, քիդեմ, գարծեմ ևն:

Ավելացնենք նաև, որ արևելահայերենով գրված տեքստում արևմտահայերենի տարրերը ևս հիմնականում կատակային կիրառություն ունեն՝ մը անորոշ հողը (բան մը, կով մը), իշտե, ատանկ բաներ, ծիրին մեջ ևն: Համացանցում բավականին տարածված է նաև պարսկահայերի խոսվածքով մի արտահայտություն՝ «մե ծիծաղ, մե խինդ, մե ուրախուչուն», որ ծագել է «Բարի գալուստ Ամերիկա» ներկայացումից:

Հանդիպում են նաև բարբառով գրված տեքստեր. մարդիկ սոցցանցերում շփվում են այն լեզվով, որով խոսում են առօրյայում: Մա նույնպես համացանցում գրավոր և բանավոր խոսքի միջև տարբերությունները ջնջելու դրսևորում է, երբեմն երգիծանքի միջոց, կատակի ձև, թերևս նաև որոշ իմաստով կեսկատակ-կեսլուրջ պայքար Երևանի խոսվածքի դեմ, որ դարձել է արևելահայերի շփման ընդհանուր լեզու: Բարբառով գրված տեքստերը, մեկնաբանությունները շատ են հանդիպում հատկապես վերջին 2-3 տարիներին, ընդ որում՝ ոչ միայն թեմատիկ խմբերում (օրինակ՝ «Գեղամեջ», «Լոռվա հումոր», «Կատակում են գյումրեցիները» ևն), այլև խմբերից դուրս՝ մարդկանց անձնական էջերում, չատերում: Նկատել ենք, որ բարբառով ամենաշատը գրում են գյումրեցիները, լոռեցիներն ու դարաբաղցիները:

## Մեմեր

Մեմը (meme) մշակութային ինֆորմացիայի միավոր է. այն կարող է լինել բառ, արտահայտություն, գաղափար, սիմվոլ, պատկեր, միտք, որ տարածվում, փոխանցվում է համացանցի միջոցով՝ վերբալ կամ ոչ վերբալ եղանակով և սովորաբար հումորային բովանդակություն ունի: Մեմերը լինում են տարբեր տեսակների՝ տեքստ, նկար/լուսանկար (հայտնի մարդկանց գրողներ, գիտնականներ, արվեստի, գիտության ներկացուցիչների, քաղաքական գործիչների ևն), գիֆ, մեդիամեմ, կոմիքս, դեմոտիվատոր ևն:

Ինչպես արդեն նշել ենք, համացանցը շատ արագ է արձագանքում տեղի ունեցող իրադարձություններին, դեպքերին: Ամենաշատ մեմերը կապված են քաղաքական թեմաների, քաղաքական, հասարակական գործիչների անվան հետ: Հասարակությանը հուզող գրեթե ցանկացած թեմա՝ քաղաքական, սոցիալական, մշակութային ևն, նոր մեմերի ծագման առիթ է դառնում: Դրանց մեծ մասն արագ մոռացվում է, կորցնում արդիականությունը, սակայն կա նաև համեմատաբար երկար կյանք ունեցող մեմեր: Երբեմն այս կամ այն մեմը ժամանակ առ ժամանակ կարող է նորից դառնալ արդիական: Օրինակ՝ ընտրությունների ժամանակ ստեղծված մեմերը նոր ընտրությունների շեմին նորից են դրվում շրջանառության մեջ: Կամ որևէ պաշտոնյայի անվան հետ կապված մեմերն ու անեկդոտները սովորաբար մոռացվում են վերջինիս՝ պաշտոնից դուրս գալուց հետո, սակայն նոր պաշտոն ստանալը կարող է հին մեմերը հիշելու առիթ դառնալ:

Կան այսպես կոչված «միջազգային» և տեղական ծագման մեմեր: «Միջազգային» մեմերը ստեղծվում են որևէ լեզվում, ապա տարածվում համացանցում: Հայալեզու ցանցում հասկանալի պատճառներով բավականին շատ են հատկապես Ռուսաստանում և անգլիալեզու ցանցում ստեղծվող մեմերը, քանի որ մեր շփումն ավելի շատ հենց այդ տիրույթի հետ է: Սովորաբար տարածվում են կարևոր քաղաքական թեմաներով, շոու-բիզնեսի և սպորտի հետ

կապված «միջազգային» մեմերը, որոնք հետաքրքրում են տարբեր երկրներում ապրող, տարբեր

լեզուներով խոսող մարդկանց: Մեմ է դարձել և երկար ժամանակ հեզնական, երգիծական, կատակային իմաստով գործածվում է #Save (փրկել) հեշթեգը՝ #Save+որևէ անուն (սովորաբար աշխատանքից ազատված պաշտոնյայի)՝ #SaveՍուրիկ (Սյունիքի նախկին մարզպետը), #SaveԴԱՀԿ նն: Հայալեզու համացանցում այն տարածվեց 2014թ. -ին՝ #SaveKesab հեշթեգից:

Համացանցում տարածված երևույթ է փոխել պրոֆիլի նկարը այս կամ այն դժբախտ պատահարի, իրադարձության գոհ դարձած մարդու կամ տվյալ երկրի դրոշի նկարով՝ ի նշան ցավակցության և աջակցության: Օրինակ՝ երբ Ֆրանսիայում ահաբեկչության գոհ դարձան բազմաթիվ մարդիկ, աշխարհի տարբեր անկյուններում մարդիկ իրենց նկարի փոխարեն դրեցին Ֆրանսիայի դրոշի նկարը: Սակայն հաճախ սա հեզնանքի առարկա է դառնում. հատկապես երբ Բավականին շատ են տեղական ծագման մեմերը, որոնք ստեղծվել ու տարածվել են հենց հայալեզու համացանցում: Դրանց մեծ մասը կապված է քաղաքական, հասարակական գործիչների, սպորտի ու շոու-բիզնեսի ներկայացուցիչների, այս կամ այն կոնկրետ դեպքի, իրադարձության հետ: Դրանց մի մասը կարելի է գտնել արդեն հիշատակված «Չտեսություն» կայքում, ֆեյսբուքյան տարբեր խմբերում, օգտատերերի անձնական էջերում, բլոգներում, էլեկտրոնային լրատվամիջոցներում և դրանց ֆեյսբուքյան էջերում: «Թուրքը տեսնում ուրախանում ա/թուրքը կտեսնի կուրախանա» արտահայտությունը հաճախ է գործածում այսպես կոչված «հայրենասեր» զանգվածը . հայերի կամ Հայաստանի մասին գրեթե ցանկացած քննադատական գրառման տակ հայտնվում են մարդիկ՝ կոչ անելով «չուրախացնել թուրքերին»: Այս արտահայտությունը վաղուց մեմ է դարձել և կիրառվում է «հայրենասեր» զանգվածին հեզնելու նպատակով: Տարածված է նաև այլ տարբերակը՝ «թուրքը տեսնում տխրում ա»:

Հայ-ադրբեջանական հակամարտության թեմայով ստեղծվել և բավականին երկար ժամանակ գործածվում է «այսինչ բանն ավելի հին է, քան Ադրբեջանը» մեմը: Մեմի ծագման պատճառը Ադրբեջանի «պատմաբանների» անհեթեթ ու հակագիտական ելույթներն են, թե իրենք այս տարածաշրջանի հնագույն ժողովուրդներից մեկն են: Օրինակ՝ Ալլա Պուգաչովան ավելի հին է, քան Ադրբեջանը; Կազիրյոկն ավելի հին է, քան Ադրբեջանը; հրապարակի տոնածառն ավելի հին է, քան Ադրբեջանը նն:

Մեմ է դարձել «մեր միջի թուրքը» արտահայտությունը, որը տարածվել է նաև դեռահասների շրջանում:

Հայտնի է, որ մեմերի մեծ մասը կապված է այս կամ այն իրադարձության, դեպքի կամ պաշտոնյայի անձի հետ: Քաղաքական, հասարակական գործիչների, շոու-բիզնեսի ներկայացուցիչների, լրագրողների ասած ամեն բառ, արտահայտություն կարող է մեմ դառնալ: Դեռահասները կրկնում և միմյանց են փոխանցում ՀՀ նախագահի, Վարչապետի, Կաթողիկոսի, ԱԺ պատգամավորների և քաղաքական այլ գործիչների անվան հետ են կապված հայտնի մեմեր.

- ✓ Միթուն չի, Տարոն ջան:
- ✓ Եկել ես մեր տունը հարամում ես, որ ի՞նչ անես:
- ✓ Տենց եք անում, որ խիարը թարս է բուսնում:
- ✓ Ինչպես տատս էր ասում. . .
- ✓ Ինչքան ուզենք, էնքան խփենք:
- ✓ Սա Հայաստանն է և վերջ:

✓ Իյա, իրո՞ք են:

Վերջին տարիներին քաղաքական թեմաներով ամենաշատ մեմերը թերևս կապված են Գալուստ Սահակյանի և Տիգրան Արզաքանցյանի անվան հետ. նրանց գրեթե յուրաքանչյուր ելույթ, արտահայտություն մեմի է վերածվում: Մեջբերենք մի քանիսն առանց մեկնաբանության

✓ «ՀՀ-ն հավակնում է դառնալ միակ երկիրը, որ փորձ է անում չքաղաքականացնել քաղաքականությունը»:

✓ «Ոչ արտահայտություն չկա, դա չէ-ն է, իսկ չէ նշանակում է ոչ էական»:

✓ «Ցմահ կլինի մահապատիժը»:

✓ «Դեմ լինելը դա ընդդեմը չէ»:

✓ «Հայաստանում կոռուպցիա չկա, կաշառակերություն կա»:

✓ «Երբ մենակ ես լինում, մի քանի հոգով կարողանում ես լսել ռաբիս երաժշտություն»:

✓ «Գողությունը գողանալ բառը չէ»:

✓ «Կոչ եմ անում չքաղաքականացնել ԱԺ ամբիոնը»:

✓ «Ես ձեր մերկությունը լավ եմ տեսել և չեմ գայթակղվել»

✓ Շնորհավորում եմ գարնան առաջին օրը՝ սեպտեմբերի 1-ը:

✓ Սիրեք գիտությունը և դասերից մի՛ ցվրվեք:

✓ Հայ գրերի ստեղծող Մեսրոպ Խորենացին... են:

Անեկդոտներ, պարոդիաներ, ցանցային հումոր

Այս ուսումնասիրության մեջ մենք չենք անդրադարձել այն անեկդոտներին, որոնք ստեղծվել ու ստեղծվում են բանավոր խոսքում՝ համացանցից դուրս: Այդ անեկդոտներն իհարկե հայտնվում են համացանցում՝ մասնավորապես տարբեր կայքերում, խմբերում, սոցցանցերում:

Մեր դիտարկումներով՝ համացանցային անեկդոտների մեծ մասը քաղաքական է: Շատ են նաև սոցիալական թեմաներ շոշափող անեկդոտները: Ինչպես բանավոր խոսքում, այնպես էլ համացանցում, անեկդոտն առաջինը հորինողին պարզելը շատ դեպքերում գրեթե անհնարին է:

Հաջողված անեկդոտը բավականին արագ տարածվում է, ենթարկվում փոփոխությունների, վերաշարադրվում, այլալեզու անեկդոտները թարգմանվում են, հաճախ տեղայնացվում հայալեզու համացանցում:

Բավականին շատ են բանավոր խոսքում տարածված անեկդոտների արդիականացված տարբերակները: Համացանցային դարում ավանդական «հայր, ռուսը, վրացին (կամ ադրբեջանցին)» փոխարինվում են այսօրվա քաղաքական/հասարակական գործիչների անուններով:

Քիչ չեն նաև անեկդոտները, որտեղ միահյուսվում են ավանդական ֆոլկլորն ու ժամանակակից մեմերը. Անեկդոտի հերոս են դառնում տարբեր քաղաքական, հասարակական, մշակութային գործիչներ.

10 апреля 2016 г. ⌂

Հայր, ուսը փացին հավաքվում են, աղբբեջանցին չկա, որովհետև էդ անեկդուող ավելի հին ա. քան Աղբբեջանը

From Angie Abelyan

Մերժ Սարգսյանը ելայթ է ունենում դպրոցներից մեկի 5-րդ դասարանում Ելույթի վերջում նա հարցնում է.  
 -Երեխաներ ինձ հարցեր ունե՞ք?  
 Ձեռք է բարձրացնում «Աարդանիկը և ասում.  
 -ես ունեմ 3 հարց,  
 Ինչու եք կեղծում ընտրությունները?  
 Ինչու եք հանձնում հողերը?  
 ինչու եք ձերբակալել Ժիրայր Մեֆիլյանին?  
 Մերժը նեղն է ընկնում, բայց հեչում է զանգն և երեխաներն աղմուկով դուրս են վազում.  
 Դասավիջոցից հետո նորից հավաքվում են դասարանում և Մերժը նորից հարցնում է.  
 -Երեխաներ ինձ հարցեր ունե՞ք?  
 Բարձրանում է Աշոտիկն ու ասում է.  
 - ես ձեզ ունեմ 5 հարց  
 Ինչու եք կեղծում ընտրությունները?  
 Ինչու եք հանձնում հողերը?  
 ինչու եք ձերբակալել Ժիրայր Մեֆիլյանին?  
 ինչու զանգը ավելց 20 րոպե շուտ?  
 և ուր է «Աարդանիկը ? 🤔🤔🤔🤔

👍 Нравится    💬 Комментарий    ➦ Поделиться


**Ուսու մնասիրության արդյունքները**

Թեմայի առնչությամբ ուսումնասիրությունն եմ կատարել ԵՊԲՀ «Հերացի» ավագ դպրոցի սովորողների շրջանում: Թիրախային խումբը 15-17 տարեկան աշակերտներն են եղել:

Հարցաթերթիկը բաղկացած էր 5 հարցից.

**Առաջին** հարց՝ «Հաճա՞խ եք ժարգոն օգտագործում»:

Հարցվածների 73%-ը խոստովանել է, որ հաճախ է օգտագործում համացանցային ժարգոն. 20 %-ը՝ հազվադեպ, իսկ 7 %-ը նշել է, որ ժարգոն ընդհանրապես չի օգտագործում:






Աղյուսակ 1.

2. **Երկրորդ** հարց՝ «Ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքը ժարգոնի նկատմամբ»:


Դրական պատասխան է տվել սովորողների 43%-ը: Ժարգոնի նկատմամբ բացասական վերաբերմունք ունի 17 %-ը, իսկ հարցվածների 40%-ը նշում է, որ իրենց չի հետաքրքրում:



Աղյուսակ 2


3. **Երրորդ** հարց՝ «Համացանցում շփվելիս հետևում և՛ եք հայոց լեզվի ուղղագրական կանոններին»:

Դեռահասների 55%-ը նշում է, որ ոչ միշտ է ճիշտ գրում բառերը. 35%-ը հետևում է կետադրական կանոններին, և միայն 10%-ը խոսստովանում է, որ բառեր գրելիս չի մտածում սխալների մասին:



### Աղյուսակ 3

4. **Չորրորդ** հարց. «Ո՞րն է Ձեր կարծիքով մեր օրերում ժարգոնի տարածվածության պատճառը»:



Աղյուսակ 4.

Հարցվածների 65%-ը կարծում է, որ ժարգոնը նպաստում է մտքերը ավելի հեշտ արտահայտելուն, 20%-ը այն համարում է նորաձև, 10%-ը նշում է, որ դա իրեն դուր է գալիս, իսկ 5%-ը չգիտի հարցի պատասխանը:

5. Որպես եզրափակիչ հարց՝ սովորողներին առաջարկվում էր գրել իրենց կողմից ավելի հաճախ գործածվող համացանցային ժարգոնային բառեր: Ստորև ներկայացվում է դրանցից մի քանիսը.

Ժարգոնային բառեր կամ օտարաբանություններ

Ստորև ներկայացվում են ժարգոնային որոշ բառեր և օտարաբանություններ, որոնք հաճախ են հանդիպում համացանցային հարթակներում

*Աբստրակտ* - վերացական

*Աբսուրդ* - անհեթեթություն

*Ազենտ* - գործակալ

*Ագրեսիվ* - հարձակողական

*Ադմինիստրացիա* - վարչակազմ

*Աժիտաժ* - իրարանցում

*Ակումուլյատոր* – կուտակիչ

*Ակցենտ* - շեշտադրում

*Ալիբի* – այլուրեքություն  
*Ալմանախ* - տարեգիրք  
*Ամբիցիա* - հավակնոտություն  
*Ամբիցիոզ* – հավակնոտ, փառասեր  
*Ամպուլա, ֆլակոն* - սրվակ  
*Անոմալիա* – շեղում, անկանոնություն  
*Անտենա* - ալեհավաք  
*Անտիպատիա* – հակակրանք  
*Ապատիա* - անտարբերություն  
*Ապարատ* – սարք, հարմարանք  
*Ապրիորի* - կանխակալ  
*Ամնիստիա* - համաներում  
*Ասպեկտ* – հայեցակետ, տեսանկյուն  
*Ասիստենտ* - օգնական  
*Ավանս* - կանխավճար  
*Ատեստատ* – ավարտական վկայական  
*Ատրակցիոն* - զվարճախաղ  
*Արգումենտ* – փաստարկ, ապացույց  
*Արսենալ* - զինանոց  
*Առուդիտ* - հաշվեքնություն  
*Ափդեյթ* – թարմացում, նորացում  
*Աֆեկտ* – գրգռվածություն, գորով  
*Աֆիշ* – ազդագիր  
*Առուդիտ* - հաշվեքնություն  
*Բագա* – հիմք  
*Բագիս* - հիմք, խարիսխ  
*Բալանս* – հաշվեկշիռ, հավասարակշռություն  
*Բանդա* – ավազակախումբ  
*Բանդիտ* – ելուզակ, ավազակ  
*Բանկ* – դրամատուն  
*Բարել* – տակառ  
*Բարիեր* – արգելապատ, խոչընդոտ  
*Բեյջ* - անվանաքարտ  
*Բլանկ* – ձևաթուղթ  
*Բլեֆ* – խաբկանք, սուտ  
*Բլից* - կայծակնամարտ  
*Բլոկ* – դաշինք, զանգված

*Բլոկադա* - շրջափակում  
*Բրիֆինգ* – ձեպագրույց  
*Բուկլետ* - գրքույկ  
*Բուլյոն* - արգանակ  
*Բուքսիր* - քարշակ  
*Գագոն* - սիգամարգ  
*Գալակտիկա* – համաստեղություն  
*Գանգրենա* – փտախտ  
*Գանգստեր* – ավազակ  
*Գաստրոլ* - հյուրախաղ  
*Գարանտիա* – երաշխիք  
*Գարդերոբ* – զգեստապահարան  
*Գենդերային* - սեռահավասարային  
*Գենետիկա* - ծագումնաբանություն  
*Գիդ* – ուղեվար, ուղեկցորդ  
*Գլոբալ* - համընդգրկուն  
*Գոբելեն* – գորգանկար  
*Գոնգ* – կոչնագանգ  
*Գրանտ* – դրամաշնորհ  
*Գրունտ* – բնահող, գետին  
*Գուրման* - համադամասեր  
*Դալտոնիզմ* – գունաշփոթություն  
*Դեբատ* – քննարկում, բանավեճ  
*Դեբետ* – պարտք  
*Դեբյուտ* – առաջնաելույթ  
*Դեգուստացիոն* – համտեսում  
*Դեգրադացում* – արժեզրկում, անկում  
*Դեզինֆորմացիա* – ապատեղեկատվություն  
*Դելիկատես* – նրբախորտիկ  
*Դեկլարացիա* – հայտարարագիր, հայտարարություն  
*Դեմագոգ* – ամբոխավար  
*Դեմոնստրացիա* – բողոքացույց  
*Դեպոզիտ* – վկայություն  
*Դեպրեսիա* – ընկճախտ  
*Դե ֆակտո* – փաստացի, փաստորեն  
*Դեդեկտիվ* – խուզարկու  
*Դեֆեկտ* – թերություն

*Դեֆիցիտ* – պակասորդ  
*Դեֆորմացիա* – ձևախեղում  
*Դիաբետ* - շաքարախտ  
*Դիալոզ* -- երկխոսություն  
*Դիալեկտ* – բարբառ  
*Դիետա* – սննդկարգ  
*Դիլեմա* – երկընտրանք  
*Դիլետանտ* – ոչ արհեստավարժ  
*Դիլիժանս* – ծածկակառք  
*Դինաստիա* – գահատոհմ  
*Դիպլոմատիա* – դիվանագիտություն  
*Դիսկվալիֆիկացիա* - որակազրկում  
*Դիսպետչեր* - կարգավար  
*Դիսպետչեր* - կարգավար  
*Դիսփլեյ* – ցուցադրիչ  
*Դիվիդենտ* - շահաբաժին  
*Դիրեկտիվ* – հանձնարարական, ցուցում, հրահանգ  
*Դոտացիա* – լրավճար  
*Դուբլիկատ* – կրկնօրինակ  
*Դրայվ* – շարժընթաց, մղում  
*Էլեկտորատ* – ընտրազանգված  
*Էսկորտ* – թիկնազոր  
*Էքսքլուզիվ* – յուրահատուկ, անօրինակ  
*Էֆեկտիվ* - արդյունավետ  
*Ժյուրի* – մրցատյան, դատակազմ  
*ժելե* – դոնդոդ  
*Բդենտիֆիկացիա* – նույնականացում  
*Բմիտացիա* – նմանակում  
*Բմպերատիվ* – հրամայողական  
*Բներտ* – անգործունյա, չեզոք  
*Բնստինկտ* – բնազդ  
*Բնսուլտ* – կաթված  
*Բնտերշիֆ* – փորձաշրջան  
*Բնտոնացիա* – հնչերանգ  
*Բնֆորմացիա* – տեղեկություն  
*Լեզալ* – օրինական  
*Լեքսիկա* – բառապաշար

*Լոգոս* – նշանագիր  
*Լոկալ* – տեղային  
*Խարիզմա* – շնորհ, գրավչություն

*Խողովիկ* – ընթացագործ  
*Կաբել* – մալուխ  
*Կապսուլ* – պատիճ  
*Կոմպրոմատ* – գրպարտագիր  
*Կոմպրոմիս* - փոխզիջում  
*Կայֆ բոնեյ* – զվարճանալ, ըմբռնել  
*Կոմպ*– համակարգիչ  
*Կոմպրոմիս* - փոխզիջում  
*Կրեատիվ* - ստեղծարար  
*Հակեր* - ցանցահեն  
*Հիբրիդ* – խառնածին  
*Մագնատ* - մեծահարուստ  
*Մակետ* - մանրակերտ  
*Մանթրաժ* - շփոթված, հուսահատ  
*Մասկա* – դիմակ  
*Մենտալիտետ* – մտածելակերպ  
*Միզանտրոպ* - մարդատյաց  
*Մինիմալ* – նվազագույն  
*Մոտիվ* - շարժառիթ  
*Նավիգատոր* - ճանապարհացույց  
*Նագլիություն անել* – չափն անցնել, համը հանել  
*Նոնսենս* - անմտություն  
*Շարմ* - հմայք  
*Շլագբաում* – ուղեփակոց  
*Շնուրոկ* - քուղ  
*Շոկ* – *ցնցում*  
*Շրիֆտ* - տպատառ  
*Միրոպ* - օշարակ  
*Միրեյ* - ցողիչ  
*Չուլան* - խորդանոց  
*Պանիկա* – խուճապ  
*Պարագիտ* - մակաբույծ  
*Պրագմատիկ* – գործնական, հանդուգն

*Պրիմիտիվ* – պարզունակ  
*Պրիորիտետ* – գերակայություն  
*Պրոդուկտիվ* – արդյունավետ  
*Պրոյեկտ* – նախագիծ  
*Ռադիկալ* – արմատական  
*Ռացիոն* – չափաբաժին  
*Ռեկետ* - բնաշոքրում  
*Ռեյտինգ* – վարկանիշ  
*Միստեմ* – համակարգ  
*Սկեպտիկ* - թերահավատ  
*Ստաբիլ* - կայուն  
*Սուպեր* – ընտիր (հրաշալի) է  
*Տոչկա բռնել, տոչկել* - սևեռվել, կենտրոնանալ մի առարկայի վրա, հետևել մի բանի  
*Փսիխ* – ջղային կամ ծիծաղելի  
*Փսիխ կրլներ* – հետաքրքրի կլիներ  
*Քաշվանք* – կորած ենք  
*OK* – շատ լավ  
*Ֆոյե* – ձեմասրահ

**Խորհուրդներ դեռահասներին**

- Անհրաժեշտ է ուշադիր լինել սեփական խոսքի նկատմամբ. չէ՞ որ այն մարդու բնութագրիչներից մեկն է: Հետևի՛ր քո խոսքին, մաքրի՛ր այն անհարկի օտարաբանություններից, սովորիր կառավարել քեզ՝ խոսակցության մեջ օգտագործելով հիմնականում գրական բառեր:
- Պարզի՛ր բառի ծագումը. երբեմն կան բառեր, որոնք «վատ» համբավ ունեն, քանի որ գործածվում են կասկածելի վարկանիշ ունեցող մարդկանց՝ մարդասպանների և գողերի շրջանում: Հնարավոր է, որ, այդ իմանալով, դու իսպառ կբացառես քո բառապաշարում դրանց առկայությունը:
- Գրքեր շատ կարդա՛. դա բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրն է: :

**Եզրակացություն**

Թեմայի ուսումնասիրության արդյունքում պարզվեց հետևյալը. Ժամանակակից աշխարհում համացանցային ժարգոնը օրեցօր ամրապնդում է իր դիրքերը և ընդլայնում օգտագործողների շրջանակը: Երբեմն պատճառը ժամանակ խնայելու ձգտումն է, երբեմն՝ նախասիրությունը, երբեմն էլ այն պարզապես համարվում է «վարկանիշային» և «նորաձև»: Բայց արդյունքում մայրենի լեզուն կորցնում է իր ողջ հարստությունը, գեղեցկությունն ու պատկերավորությունը: Հայրենիքի հանդեպ սերն արտահայտվում է մայրենիի նկատմամբ վերաբերմունքով: Եկեք հարգենք մեր Հայրենիքը, մեր մշակույթը և մեր լեզուն:

Նախ, ինտերնետում շփումը, որը չի ստիպում մտածել, թե ինչպես եք գրում և ինչպես եք խոսում, բացասաբար է անդրադառնում ժամանակակից դեռահասի բառապաշարի վրա: Երեխաները վարժվում են սխալ խոսքին և սկսում են ժարգոնային արտահայտություններ օգտագործել ոչ միայն առցանց հաղորդակցման ժամանակ, այլև միմյանց հետ շփվելիս, ուսուցիչների և ծնողների հետ գրուցելիս:

Երկրորդ, լեզուն խճողվում է մեծ թվով օտար բառերի օգտագործման պատճառով:

Երրորդ՝ ֆորումները լի են անպարկեշտ բառերով ու արտահայտություններով:

Չորրորդ՝ վիրտուալ հաղորդակցության մեջ գրագիտության որակի նկատմամբ վերաբերմունքը կախված է նրանից, թե որն է երեխաների համար առաջնային, որը՝ երկրորդական՝ գրագետ խոսելու պահանջը, թե՞ նորաձևությանը տուրք տալու կամ ժարգոնային բառերով ու սրամտություններով աչքի ընկնելու ցանկությունը:

Մյուս կողմից նկատելի է, որ թեև դեռահասների բանավոր խոսքը ողոված է ժարգոնային և օտարանուն բառերով, գրավոր խոսքը համեմատաբար «մաքուր» է դրանցից: Իհարկե, ոչ մի վատ բան չկա նրանում, որ երիտասարդները ազատ են իրենց հաղորդակցման մեջ. ի վերջո առօրյա-խոսակցական ոճը հենց այդպիսին է, սակայն վտանգն այլ տեղում է. այն բացասաբար ազդում խոսքային մշակույթի վրա: Լեզվական սխալները, աղքատիկ բառապաշարը, ժարգոնային բառերն ու արտահայտությունները դառնում են գերակշռող, ինչն իր հետ բերում է գրագիտության պակաս՝ քերականական ու կետադրական բազում սխալներ, գրական լեզվի չիմացություն: Լուծման բանալին մեկն է՝ շատ գրքեր կարդալ: Ընթերցանությունն օգնում է ավելի հեշտ է հասկանալ քերականությունն ու կետադրությունը, քանի որ հիշողության մեջ մնում են արտահայտությունները, հիշվում են կետադրական նշաններն ու փոխաբերական արտահայտությունները:

Պետք է խոստովանենք, որ կան տարբեր այլանդակ բառեր ու արտահայտություններ, որոնք աղտոտում են մեր լեզուն: Ցավալի է, որ դրանք հատկապես «պատվաստվում են» երիտասարդական միջավայրում, որտեղ ստեղծվում են մեր մտավորականության նոր կադրեր: Բացի այդ, այդ «խոսքերը» աստիճանաբար տարածվում են մեր աշխատավոր երիտասարդության լայն շրջանակներում:

Լեզվական անկարգությունն էլ, ինչպես ամեն բան այս աշխարհում, ունի իր բացատրությունը: Ըստ երևույթին, դա ևս կապված է մարդու ինքնահաստատման ձգտման հետ, որն առհասարակ հատուկ է մարդուն կենսաբանորեն. գիտակցաբար, թե անգիտակցաբար, մարդն իր արարքներով ու վարքագծով ուզում է հաստատել իրեն, իր անհատականությունը, իր յուրահատկությունը: Ժարգոնով խոսելը դրա ձևերից մեկն է երևի, ճիշտ է, ոչ լավագույն ձևերից, բայց դրանցից մեկն է՝ տեսե՛ք-տեսե՛ք. ես ուրիշների նման, սովորականի պես չեմ խոսում, ուրեմն՝ մյուսներից տարբերվում եմ, առանձնաշեշտվում եմ: Բայց ի՞նչ մի լավ բան կա այդպես տարբերվելու մեջ, կարող եք հարցնել դուք: Դա արդեն հարցի մյուս կողմն է, որ ունի պարզ պատասխան՝ իհարկե, ոչ մի լավ բան: Սակայն այդ պատասխանը դրությունը չի



փոխում: Ժարգոնները, դրանց թվում նաև «դպրոցական ժարգոնը», կան և մնում են: Ավելին, դրանք ամեն մի կենդանի, ապրող լեզվի պարտադիր հատկանիշներն են:

Ուրեմն, կարելի է եզրակացնել, ժարգոնների, նաև «դպրոցական ժարգոնի» հանդեպ ճիշտ վերաբերմունքը դրանց իսպառ ժխտումը չէ, ոչ էլ դրանց մեջ եղած կենդանի ու կենսունակ տարրերի, վառ, դիպուկ արտահայտությունների անտեսումը:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Аврамова С. А. Дискурс в сети Интернет // Новый канал речевого порождения // Электронный ресурс: <http://bukvi.ru> (25.10.2010)
2. Бергельсон М.Б. Языковые аспекты виртуальной коммуникации // Вестник московского университета. Лингвистика и межкультурная коммуникация, 2002, № 1.
3. Кондрашов П. Е. Компьютерный дискурс (социолингвистический аспект). Дисс. канд. ... филол. наук. Краснодар, 2004.
2. Гальперин И. Р. О термине «сленг» // Вопросы языкознания. NO 6.1956. С. 107-114.
3. <http://www.esyes.am/news/article/view/6/6322/>
4. Գոհար Ալեքսանյան, Դպրոցական ժարգոն. «Մենք և մեր բառերը»
5. Էդուարդ Բագրատի Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1976:
6. Հրաչյա Աճառյանի անվան Լեզվի Ինստիտուտ, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, «Հայկական ՄՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն», 1969:
7. Աշոտ Մուրադի Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, «Հայկական ՄՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն», 1967:
8. Աշոտ Մուրադի Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, «Երևանի Պետական Համալսարան», 2009:
9. Սերգեյ Աշոտի Գալստյան, Դպրոցական բառակազմական բառարան (Դպրոցական մատենաշար) (խմբ. Հովհաննես Զաքարյան), Երևան, ««Զանգակ-97» հրատարակչություն», 2011 — 230 էջ, ISBN 978-99941-1-933-2:
10. Սիլվա Պապիկյան, Թատերագիտական և կինեմատոգրաֆիական տերմինների համառոտ բառարան, Երևան, «Էդիթ Պրինտ հրատարակչություն», 2015 — 128 էջ:
11. Ֆ. Հ. Խլդաթյան, Ոճաբանական տերմինների բառարան տեղեկատու, Երևան, ««Լույս» հրատարակչություն», 1976 — 111 էջ:
12. Ջրբաշյան Է. Մ. , Մախչանյան Հ. Մ. , Գրականագիտական բառարան (2-րդ լրաց. և վերամշ. հրատ. ) (Լույս), Երևան, 1980 — 352 էջ:
13. Զ. Խալափյան, «Լեզուն էլ ունի իր վարպետները», Երևան, 1999
14. Ա. Քամայյան, «Համացանցային հաղորդակցման լեզվի առանձնահատկությունները»

## Կայքեր

1. <https://web.facebook.com>
2. <http://www.panarmenian.net/arm/>
3. <http://blognews.am/arm/>
4. <http://news.am/arm>
5. <https://www.azatutyun.am>
6. <http://hetq.am/arm>
7. <http://www.banman.am/>
8. <https://www.youtube.com/>
9. <http://www.mediamax.am/am/>
10. <https://168.am/>
11. <https://www.youtube.com/>
12. <https://goo.gl/e7HcJw>
13. <https://lurkmore.to>
14. <http://www.netlore.ru/>

# Բովանդակություն

Մուտքի խոսք.....	2
Ներածություն .....	2
Մի քանի խոսք ժարգոնի մասին.....	3
Ի՞նչ է ժարգոնը .....	5
Ժարգոնի բնորոշ առանձնահատկությունները և տեսակները.....	6
Հանրաճանաչ սոցիալական ցանցեր .....	7
Դպրոցական ժարգոնի ծագումը.....	8
Համացանցային ժարգոնի ձևավորման պատճառները.....	9
Համացանցային լեզվի որոշ առանձնահատկությունների մասին .....	10
Բառերի դիտավորյալ աղավաղված գրություն.....	11
ԱՐԱԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ.....	13
Պայմանական նշանների, սիմվոլների այլ կիրառություններ .....	15
Այլատառ հայերեն.....	16
Բառապաշարի առանձնահատկություններ .....	18
Փոխառություններ և համացանցային սլենգ.....	18
Գոեհկաբանություն, հասարակաբանություն, հայեոյական բառեր.....	20
Այլ առանձնահատկություններ .....	21
Մեմեր .....	21
Անեկդոտներ, պարոդիաներ, ցանցային հումոր.....	23
Ուսու մնասիրության արդյունքները.....	24
Ժարգոնային բառեր կամ օտարաբանություններ.....	26
Խորհուրդներ դեռահասներին.....	31
Եզրակացություն.....	31